

ՊԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ ՍՕՏ ՕՐԵՆ ՍԵՌԻՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ՊԻՏԻ ԲԱՅՈՒԻ

Սուրիական «Ուաթան» թերթը հաղորդեց, որ Դամասկոսի մեջ մօտ օրեն պիտի բացուի Սեուտական Արաբիոյ դեսպանատունը: Բացման նախապատրաստական աշխատանքները յառաջիկայ օրերուն պիտի սկսին:



Մինչեւ Դամասկոսի մեջ Ռիատի դեսպանին նշանակուիլը, պատուիրակութեան նախագահութիւնը պիտի ստանձնէ Ժամա-նակաւոր հաւատարմատար մը:

ՍՈՒՐԻՈՅ ԵՒ «ICESCO»-Ի ՄԻՋԵՒ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊԵՐՊԱՆ ԱՌՆՉՈՒՂ ՂԱՆԴՊՈՒՄ ՄԸ ՏԵՂԻ ՌԻՆԵՅԱՄ

Սուրիոյ կրթութեան նախարար, մշակոյթի, գիտութեան եւ կրթութեան ազգային յանձնախումբի նախագահ Դոկտ. Մուհամմետ Ամեր Մարտինի հանդիպում մը ունեցաւ «ICESCO» իսլամական աշխարհի մշակոյթի, գիտութեան եւ կրթութեան կազմակերպութեան ընդի. տնօրէն Սալէմ պըն Մուհամմետ ալ-Սալէբին հետ:



Ժատտեյի մեջ «ICESCO»-ի կազմակերպութեան յանձնախումբերու խորհրդակցական ժողովի, միեւնոյն ժամանակ կազմակերպութեան գործադիր խորհուրդի 44-րդ ժողովի շրջագիծէն ներս տեղի ունեցած սոյն հանդիպումին կողմերը խորհրդակցեցան Սուրիոյ եւ «ICESCO»-ի միջեւ ուսումնական եւ կրթական գործակցութեան ամրապնդման միջոցներուն շուրջ:

Նախարար Մարտինի անդրադարձաւ Սուրիոյ եւ «ICESCO»-ի գործակցութեան, յայտնելով Սուրիոյ պատրաստակամութիւնը՝ կազմակերպութեան հետ յարաբերութիւններու խորացման:

Ք. ՎԱՐԴԱՆԵԱՆԸ՝ ՓԱՇԻՆԵԱՆԻՆ. «ԻՆՉՅՈՅՍՈՎ ՇԱՐՈՒՆԱԿ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷՔ, ՈՐ ՍՕՏ ԵՒ «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ»

Հայաստան խմբակցութեան պատգամաւոր Զրիստինէ Վարդանեան Ազգային ժողովէն ներս կառավարութեան հետ հարց-պատասխանի օրակարգի ընթացքին դիմելով վարչապետ Նիկոլ Փաշինեանին հարց տուաւ. «Ի՞նչ յոյսով շարունակ կը յայտարարեք, որ մօտ է «խաղաղութեան» պայմանագրութեան ստորագրումը»:



«Հիմա կ'ուզեմ հասկնալ, երբ որեւէ սկզբունքային հարցի շուրջ համաձայնութիւն չկայ, պատերազմէն ու կորուստներէն յոգնած այս մեր խեղճ ժողովուրդին անընդհատ խաղաղութեան տեսիլքով խաբելը ինչքա՞ն պէտք է շարունակուի», հարցուց պատգամաւորը:

ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ 2024

ՊԱՏԳԱՄ ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդներուն, Հոգեւոր Դատուն, Ազգային Իշխանութեանց, եւ մեր ժողովուրդի զաւակներուն

2024 տարուան սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրական սիրով, հայրապետական օրհնութեամբ եւ ազգային վառ ապրումներով կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի զաւակները: Կ'ողջունենք յատկապէս մեր Թեմակալ Առաջնորդ Սրբազանները, Ազգային իշխանութիւնները, հայ կեանքէն ներս գործող կազմակերպութիւնները ու միութիւնները, ինչպէս նաեւ համայնքային, կրթական, բարեսիրական, մշակութային, ընկերային ու մարզական կառույցները, եւ բոլորին կը մաղթենք նորանոր իրագործումներով հարուստ տարի մը: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր Որդւոյն մարդեղութեամբ ու յայտնութեամբ բացուող Նոր Տարին մեր ժողովուրդին համար դառնայ երկնային բարիքներով ու շնորհքներով լեցուն տարի մը:

Ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդի զաւակներուն, 2003-էն սկսեալ, տարիներէն իւրաքանչիւր ձօնած ենք մեր հաւաքական կեանքին առնչուած դեպքի մը, երեւոյթի մը, արժեքի մը կամ մտահոգութեան մը: Տուեալ նիւթի ծիրէն ներս անհրաժեշտ վերլուծումը եւ շեշտաւորումները կատարած ենք, եւ ապա Մեր հայրական թելադրութիւնները փոխանցած մեր ժողովուրդին: Յաճախ կարելորդութեամբ անդրադարձած ենք, թէ եկեղեցին իր եւութեամբ ու կոչումով դէպի ժողովուրդ ուղղուած առաքելութիւն է: Արդարեւ, Զրիստոսին ուսուցումները տեսական ու պարագայական չէին. անոնք անմիջական աղերս ունեին ժողովուրդի կեանքին հետ: Այսօր եւս, եկեղեցին կոչուած է իր հոգեւոր հօտը հրաւիրելու, որ հոգեւոր խորհրդածութիւններու ու հաւաքական քննարկումներու ճամբով անդրադառնայ իր կեանքին հետ սերտ առնչութիւն ունեցող մտահոգութիւններուն ու մարտահրաւերներուն: Միաժամանակ եկեղեցւոյ առաքելութիւնն է անհրաժեշտ ցուցումները կատարել՝ ի խնդիր հոգեւոր, բարոյական ու ազգային արժեքներու առաւել կենսաւորման: Այն նպատակը կը հետապնդեն Մեր հայրապետական Հռչակագրերը: Գոհունակութեամբ կ'ուզենք յայտնել, որ ցարդ հրապարակուած հռչակագրերը մեր հաւաքական կեանքէն ներս առիթ հանդիսացած են լայն քննարկումներու, եւ իրենց պարզած մտահոգութիւններուն ու կատարած թելադրութիւններուն լոյսին տակ, մեր ժողովուրդի զաւակները մղած վերաքննութեան ու վերաթելումման ենթարկելու իրենց անհատական թէ համայնական կեանքը:



2024 ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

Ինչպէս գիտեք, 2022 եւ 2023 տարիները նուիրած էինք Սփիւռքին՝ 2022-ը **Հայրապետական օրհնութեամբ, Աղօթարար՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ 1 Յունուար 2024 Անթիլիաս, Լիբանան**

Տեղական Լրագրող

Խմբագրական

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՐԻՆ ՅՈՒՈՐՏԱՆՔԸ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ

9 Նոյեմբերի եռակողմ համաձայնության ստորագրումից մինչև մեր օրերը Ատրպեյճանի յարձակողական ոճը աստիճանաբար աճեցաւ ու հասաւ Արցախի պարպումին, ամբողջական բռնազրաւումին, աւելին. Հայաստանի հետ «խաղաղութեան համաձայնագրի» հեռանկարին աղաւաղումին:

Ատրպեյճանի նախագահին իր երկրի լրատուամիջոցներու տուած վերջին հարցազրոյցին մէջ յստակօրէն կը պարզուէր, որ այդ երկրի նախագահը կ'ուզէ օգտագործել քանի մը կացութիւն՝ հասնելու Հայաստանի ամբողջական պաշարման եւ Սիւնիքի տարածքով թուրքիոյ հետ անկաշկանդ ու անհսկելի երթուղի ապահովելու հեռանկարին:

Յառաջիկային Ատրպեյճանի նախագահական ընտրութիւններն են: Հետեւաբար Ալիեւի հարցազրոյցը նախընտրական քարոզարշաւի առաջին քայլը կարելի է համարել, որովհետեւ ան հարցազրոյցին ընդմէջէն իր ընտրողներուն կը պարզէր, թէ խաղաղութեան պայմանագրով տրամադիր չէ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը ճանչնալու, այսպիսով ոչ միայն Արցախի բռնազրաւման շուրջ տարակարծութիւնը վերացնելով, այլեւ Հայաստանի ինքնիշխան որոշ տարածքներու բռնազրաւած ըլլալը արդարացնելով:

Հարցազրոյցէն պարզ կը դառնար նաեւ որ ո՛չ Ատրպեյճան, ոչ ալ թուրքիա Հայաստանի հետ սահմանը բանալու տրամադրութիւն ունին: Անոնք պարզապէս սպառնալիքներու լեզուով կը խօսին Հայաստանի հետ, Ատրպեյճան-Նախիջեան ուղիղ եւ անհսկելի ճամբայ, կամ իրենց խօսքով այսպէս կոչուած Սիւնիքի տարածքով «միջանցք» խլելու:

Ատրպեյճան ամէն ջանք ի գործ պիտի դնէ հասնելու շուտափոյթ պայմանագրի մը ստորագրման, առանց երրորդ կողմի կամ միջազգային խաղաղապահ ուժերու ներկայութեան, որպէսզի շարունակէ իր օրինագանցումներն ու ի հարկին յարձակումներն ու Հայաստանէն տարածքներ բռնազրաւելու վարքագիծը:

Հարցազրոյցին մէջ Շուշիի բռնազրաւումով հպարտացող Ատրպեյճանի նախագահը կը հաստատէ, որ Շուշիի բարձր դիրքը առիթ բացած է իր ուժերուն վերահսկելու ոչ միայն ողջ Արցախը, այլեւ Հայաստանի սահմանային տարածքները, Չանգեզուրը: Այլ խօսքով, Ալիեւ կը հաստատէ թէ տակաւին ախորժակներ ունի Հայաստանի տարածքներուն ուղղութեամբ, երբ կը յիշէ Չանգեզուրի ազդրիներով բնակուած ըլլալը եւ նման արտայայտութիւններով յստակ կը դարձնէ որ տրամադիր չէ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը ճանչնալու: Արցախը պաշտպանողները փաստօրէն ի գուր չէին կրկնէր, որ Արցախը Հայաստանի դարպասն է:

Հարցազրոյցի ընթացքին ան Նոյնիսկ կասկածի տակ դրաւ Հայաստանի մայրաքաղաքին հայկականութիւնը, մէկէ աւելի անգամներ հաստատեց ծաւալապաշտական իր նկրտումները՝ առանց կաշկանդուելու այսպէս կոչուած «խաղաղութեան պայմանագրի» շղարշով:

Փաստօրէն խաղաղութեան որեւէ համաձայնագիր պիտի ամրագրէ Ատրպեյճանի բռնազրաւումները, միջազգային ամէն դատապարտումէ զերծ պիտի պահէ զայն եւ տնտեսական ու ապահովական խոր ճնշումներու օղակ մը պիտի ստեղծէ Հայաստանին շուրջ, առանց Նոյնիսկ բաց սահմաններու յանկերգը իրականութիւն դարձնելու:

Հայաստանի սպառնազինումը, դաշնակիցներու հետ յարաբերութիւններու վերանայումը, արտաքին արդիւնաւետ քաղաքականութիւնը, Արցախի հարցին Նոյնիսկ արցախցիներու, Սփիւռքի ու Հայաստանի կողմէ օրակարգի վրայ պահուիլը կրնան պատուար հանդիսանալ Ատրպեյճանի նկրտումներուն:

Ու ինչպէս Ֆրանսսան հակաատրպեյճանական իր առաջին գործնական քայլը պիտի առնէ պատիժներ սահմանելով անոր դէմ, Իրան եւ այլ երկիրներ եւս, իրենց ազգային անվտանգութենէն մեկնած, կրնան դեր ունենալ կասեցնելու Ատրպեյճանի նկրտումները տարբեր սպառնալիքներով:

Խաղաղութեան պայմանագիրը նման յոխորտանքով հարցազրոյց տուող նախագահի մը հետ ստորագրելը ոչ թէ անիրատեսական կը թուի, այլ՝ քաղաքական ծուղակի համագոր քայլ:

«Գ.»

-Սեւուական Արաբիոյ մէջ Սուրիոյ Հանրապետութեան դեսպան որկտ. Այման Սուսան Սեւուական Արաբիոյ արտաքին գործոց փոխնախարար Ուալիտ Խրեյճիի հետ խորհրդակցեցաւ երկու երկիրներուն եղբայրական յարաբերութեան ամրապնդումի միջոցներուն շուրջ:



Ռիատի մէջ Սեւուական Արաբիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան յարկին տակ տեղի ունեցած հանդիպումին, կողմերը խորհրդակցեցան նաեւ Կազգայի դէմ խորայլեան գրոհին վերջին զարգացումներուն շուրջ: Անոնք շեշտեցին արաբական ջանքերը բազմացնելու անհրաժեշտութիւնը՝ խորայլեան ոճիրները դադրեցնելու գծով, ինչպէս նաեւ կարելոր համարեցին Կազգա մարդասիրական օժանդակութեան առաքումը եւ Պաղեստինի ժողովուրդին օրինական իրաւունքներուն պահպանումը:

-Իրանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը շեշտեց, որ իրանեան յեղափոխական պահակազուտը հրթիռակոծեց Արաբիոյ մէջ խորայլեան «Մոսատ»-ի կեդրոններն ու Իտլիպի մէջ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու ենթակայ կեդրոնները, պահպանելու Իրանի անվտանգութիւնն ու գերիշխանութիւնը, ինչպէս նաեւ արդար պատիժի ենթարկելու Իրանի վրայ յարձակող կողմերը:



Այս առիթով Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան բանբեր Նասր Զանասանի հաղորդագրութեամբ յայտնեց, որ Իրան մշտապէս նախանձախնդիր է տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ անվտանգութեան հաստատման, ինչպէս նաեւ իւրաքանչիւր պետութեան գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման:

Զանասանի աւելցուց, որ Իրան երբեք չի վարանիր դիմադրութեան համար իր օրինական իրաւունքը գործածելու, իր ազգային ապահովութեան սպառնացող կեդրոնները հարուածելու, իր քաղաքացիներուն ապահովութիւնը պաշտպանելու եւ ոճրագործները պատժելու համար:

Արքիւրներ հաղորդեցին, որ Իտլիպի մէջ իրանեան ուժերուն ահաբեկիչներու կեդրոններ իրթիռակոծելուն հետեւանքով ՏԱՀԵՇ ահաբեկչական խմբաւորման շարքերուն մէջ բազմաթիւ ղեկավարներ սպանուած են:

-ԱՄՆ-ի ուժերը գեղք, զինամթերք կը փոխադրեն Հասիլէի արուարձանին մէջ գտնուող իրենց զինուորական ապօրինի խարխիւր:

Եսարուպիէի արուարձանէն տեղական աղբիւրներ ՍԱՆԱ-ին հաղորդեցին, որ ԱՄՆ-ի ուժերուն ենթակայ զինուորական շարասիւն մը, շուրջ 60 զինուորական սարքերով բեռնաւորուած, մուտք գործած է ալ-Ուալիտ ապօրինի միջանցքէն եւ ուղղուած դէպի Խրապ ալ-Ճիր օդակայանի ԱՄՆ-ի ուժերուն ենթակայ խարխիւր:



-Թրքական ուժեր անօդաչու թռչող սարքերով հրթիռակոծեցին Հասիլէ նահանգի ելեկտրականութեան կայանը, որուն հետեւանքով Ամուտայի եւ Տրպէսիէի ջրամատակարարման կայանին աշխատանքը կասեցաւ, անհրաժեշտ ելեկտրական հոսքի դադրեցման պատճառով:



Շրջանի ջուրի ընկերութեան ընդ. տնօրէն Մուհամմետ Օսման յայտնեց, որ Ամուտայի եւ Տրպէսիէի ջրամատակարարման կայանը աշխատեցնելու համար շրջանին մէջ յաւելեալ ելեկտրական կայան չկայ, աւելցնելով, որ թրքական ուժերուն շրջանի ելեկտրական կայանին հրթիռակոծման շարունակութեան պարագային, Գամիշլիի ջրամատակարարման կայանը եւս ծառայութենէ դուրս գալու վտանգին դիմաց կը գտնուի:

Օսման հաստատեց, որ Ռաս ուլ-Այնի Ալլուք ջրամուղ կայանը եւս աշխատանքը դադրած էր նախապէս, որովհետեւ թրքական ուժեր ամիսներ առաջ հրթիռակոծած էին Տրպէսիէի ելեկտրաժին կայանը, ուստի Հասիլէի եւ անոր արեւմտեան արուարձանին մէջ ներկայիս շուրջ մէկ միլիոն քաղաքացի ջուրէ զրկուած է:

Լուրեր Հայաշխարհին

ՀՀ ՆԱԽԱԳԱՐԸ ՏԱԻՍԻ ՄԷՋ ՄԱՍՆԱԿՅԱԾ Է ՀԱՄԱՇՆԱՐԶԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՎԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյան, որ աշխատանքային այցելությանը կը գտնուի Չուֆերիա, մասնակցած է Տալուսի Համաշխարհային տնտեսական համաժողովի բացման հանդիսավոր արարողության:



«Արմենփրես»-ի փոխանցմամբ՝ ՀՀ նախագահի աշխատակազմեն կը յայտնեն, որ Վահագն Խաչատուրյան կը մասնակցի նաեւ համաժողովի շրջագիծէն ներս կազմակերպուող առանձին քննարկումներուն: Նախատեսուած են նաեւ նախագահի երկկողմ հանդիպումներ շարք մը երկիրներու առաջնորդներու հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱՔՈՒԻ ԶԱՐԴԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ. «ԲՈՒՈՐ ԻՐԱԽՈՒՆՔՆԵՐԸ՝ ՊԷՏՔ Է ՀԱՍՅՆԱԳՐՈՒԻՆ»

Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործոց Նախարարությունը անդրադարձած է երեսուներորս տարի առաջ այս օրերուն Պաքուի հայերուն դեմ իրականացուած ջարդերուն եւ յայտնած, որ ջարդերը դարձած են Ատրպեյճանի հորհրդային Հանրապետութենէն հայ բնակչութեան բռնի տեղահանման եւ ցեղային գտումներու քաղաքականութեան գագաթնակետը:



«Արմենփրես»-ի համաձայն, այս մասին նախարարութիւնը հաղորդագրութիւն տեղադրած է «Էքս» հարթակին վրայ եւ անելցուցած, որ ջարդերու պատճառով հարիւրաւոր մարդիկ սպանուած, անդամահատուած եւ անհետացած են, կէս միլիոն մարդ գաղթական դարձած է:

«Մենք յարգանքի տուրք կը մատուցենք անմեղ զոհերու յիշատակին եւ կը շեշտենք նման քաղաքականութեան կանխարգիլման հրամայականը եւ բոլոր իրաւունքներու հասցեագրման անհրաժեշտութիւնը», կը յիշուի յայտարարութեան բնագիրին մէջ:

ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՏԸ ՊԻՏԻ ԲՆՆԱՐԿԷ ԱՏՐՊԷՅՃԱՆԸ ՊԱՏՊԱՐՏՈՂ ԲԱՆԱՃԵԸ

17 Յունուարին, Ֆրանսայի ծերակոյտը պիտի քննարկէ 1 Դեկտեմբեր 2023-ին առաջարկուած միջկուսակցական բանաձեւը, որ ուղղուած է Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպեյճանի զինուորական յարձակումին դատա-



պարտումին եւ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականութեան ոտնահարման ու յարձակումի հետագայ փորձերուն կանխումին:

Բանաձեւով կոչ ուղղուած է պատժամիջոցներ կիրառելու Ատրպեյճանի դէմ եւ պահանջուած է երաշխաւորել հայ բնակչութեան Լեռնային Ղարաբաղ վերադառնալու իրաւունքը:

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԷԼԵԱՆ՝ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Yerkir.am-ի հարցումներուն պատասխանած է ՀՀՀ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ, Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեան:

– Պարոն Սաղաթէլեան, ինչպէ՞ս կ'արձագանքէք Փաշինեանի՝ Գաւառի մէջ ունեցած յայտարարութիւններուն, որոնք կատարուեցան ի պատասխան Ալիեւի:



– Ատիկա հրապարակային խոստովանութիւն էր այն մասին, որ ինք ձախողած է իր «խաղաղութեան օրակարգ»-ի իրականացման մէջ եւ երկիրը ուղղած է նոր պատերազմի: Նիկոլ Փաշինեան անձամբ ըսաւ, որ Ատրպեյճան Արցախով չէ բաւարարուած, զօրքերը ՀՀ տարածքէն դուրս չէ բերած, անելին՝ նոր տարածքային յաւակնութիւն ունի Հայաստանի նկատմամբ. այն ամենը, որուն մասին կը խօսինք երեք տարիէ ի վեր: Երեք տարի մեր ժողովուրդը խաբած են, յայտնելով թէ՛ մեզի պահեցէք իշխանութեան վրայ՝ խաղաղութիւն կը բերենք: Իսկ հիմա կ'ըսեն՝ չի յաջողիր, քանի որ Ատրպեյճան խաղաղութիւն չ'ուզէր: Բայց գաւեշտը հետեւեալն է, որ վերջաւորութեան Նիկոլ ըսած է, որ միեւնոյնն է՝ պիտի շարունակենք այդ ճամբով:

– Ի՞նչ պետք է ընել այս իրավիճակին մէջ:
– Ապահովութիւն եւ խաղաղութիւն ունենալու համար պետք է կազմակերպել երկրի համընդհանուր պաշտպանութիւնը եւ վարել արդիւնաւետ արտաքին քաղաքականութիւն, բան մը, որ այս իշխանութիւնը բազմիցս ապացուցած է, որ չի կրնար իրականացնել: Հարցը, որ մինչեւ հիմա չենք կրցած լուծել, կը շարունակէ մնալ նոյնը: Մենք մեր ժողովուրդին պետք է հանգամանօրէն բացատրենք, որ այս իշխանութիւնը խաղաղութեան անուան տակ մեզ կ'ուղղէ նոր ցեղասպանութեան եւ Արցախէն վերջ երկրորդ հայկական պետականութեան կորուստին: Եթէ այդ վտանգի գիտակցութիւնը մեր ժողովուրդի մեծամասնութեան կրցանք հասցնել, կը յաջողինք նաեւ արագօրէն լուծել բոլոր հարցերը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԳՈՒՆԱՅՆԷ ՊԱՔՈՒՆ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՐԵՒԷ ԽԱՆՏՈՒՄ ԾԱՆՐ ԶԵՏԵԿԱՆՔՆԵՐ Կ՛ՈՒՆԵՆԱՅ»

Եւրոպական Միութեան արտաքին յարաբերութիւններու խօսնակ Փետր Սթանըն «Արմենփրես»-ի հետ ունեցած գրոյցին ընթացքին յայտարարած է, որ հաստատուն են այս դիրքորոշման մէջ:



«Եւրոպական Միութիւնը օգտագործած է իր բոլոր կարելիութիւնները Ատրպեյճանին յստակ ուղերձներ հաղորդելու, որ Հայաստանի տարածքային ամբողջականութեան որեւէ խախտում անընդունելի է եւ ծանր հետեւանքներ կ'ունենայ մեր յարաբերութիւններուն վրայ»:

Սթանոն միեւնոյն ատեն ըսած է, որ Եւրոպական հորիւորդի նախագահ Շառլ Միշել, Եւրոպական Միութեան բարձր ներկայացուցիչ ժողովի Պորելը եւ Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Թոյվօ Զլաար կը շարունակեն ներգրաւուած մնալ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ կայուն եւ տեւական խաղաղութեան հաստատման գործընթացին մէջ:

2024-Ը՝...

Սկիզբ՝ էջ 9

ծութիւն, հետեւողական աշխատանք եւ նաեւ՝ նիւթական լայն ներդրում»:

Նորին Ս. Օծութիւնը իբրեւ նոր մարդուժի պատրաստման հիմնական բնագաւառներ կը նկատէ հայ ընտանիքը, հայ եկեղեցին, դպրեվանքը, հայ դպրոցը, հայկական բոլոր կառոյցները (կուսակցական, բարեսիրական, մշակութային, մարզական, ընկերային, եւ այլն), կաթողիկոսարանիս հայագիտական ու մանկավարժական կեդրոնը եւ համալսարանական ուսումը:

Ահաւասիկ հայրապետին տուած անմիջական լուծումները:

Անշուշտ այս լուծումներուն իրականացման պարտականութիւնն ու պարտաւորութիւնը միայն չեն ծառանար ղեկավարներուն եւ պատասխանատու մարմիններուն ուսերուն, այլ ինչպէս վեհափառը կ'ըսէ. «Համասփիւռքեան այս յոյժ կարեւոր կարիքը դարմանելու հաւաքական աշխատանքին մէջ բոլորս ալ ընելիք ու տալիք ունինք»: Մարտահրաւերը բոլորիս համար է: Անկէ «աչք խբել» ու փախուստ տալը, հայ ազգի շուտափոյթ կործանման գործին մասնակցիլ կը նշանակէ: Հետեւաբար, ակնաչ տանք Կաթողիկոսին կոչին: Աննքնք համապատասխան քայլեր: Մասնակցինք այս սրբազան առաքելութեան, որպէսզի լուսաւոր գրիչով գրենք նոր հայոց պատմութիւն:

ՄԱՐԴՈՒԹԻ...

Սկիզբ՝ էջ 1

յայտարարելով ընդհանրապես Սփիւռքի Տարի, իսկ 2023-ը՝ Սփիւռքի Տարի - Ինքնաքննություն վերակազմակերպում: Պատահական չէր յաջորդական երկու տարիներուն Սփիւռքը լուսարձակի տակ բերելու Մեր որոշումը: Սփիւռքը իր կազմաւորման ու ծաւալման հոլովոյթը ունի, եւ միշտ ենթակայ է եղած արտաքին ազդակներու ու շրջապատի պայմաններու ազդեցութեան: Այսօր Սփիւռքը լուրջ մարտահրաւերներու դիմաց կը գտնուի: Նկատի ունենալով համաշխարհային մշակոյթի թափանցումը հայ կեանքէն ներս, ազգային արժեքներու նահանջը, հայ լեզուի աղաւաղումը եւ այլ հրատապ խնդիրներ, այսօր Սփիւռքին վերարժեւորումը եւ վերակազմակերպումը դարձած է անյետաձգելի հրամայական:

Սփիւռքին նուիրուած երկու հոգակազմերուն մէջ, Սփիւռքին պարզած ներկայ կացութեան գծով 2022-ին հետեւեալ հաստատումը կատարեցինք. - «Սփիւռքը հայօրէն արագ մաշումի ընթացքի մէջ է. մեր կառոյցները սկսած են



կորսնցնել իրենց այժմեականութիւնը, եւ հետեւաբար, անհրաժեշտ է Սփիւռքի վերակենսադրումը՝ մեր կեանքը շրջապատող ներկայ պայմաններուն ու իրականութիւններուն լոյսին տակ»: Իսկ 2023-ին, անդրադառնալով Սփիւռքի կառոյցներուն, հետեւեալ յիշեցումը կատարեցինք. - «Սփիւռքը ունի մշակութային, հոգեւոր, տնտեսական, մասնագիտական, յարաբերական թէ փորձառական հսկայ ներուժ: Սակայն, տեղ մը՝ համակերպումը ու տեղայնացումը, այլ տեղ՝ անտարբերութիւնը ու անտեսումը սկսած են հայ կեանքէն հեռացնել իր սեփական ներուժը: Փաստօրէն, Սփիւռքը չէ կրցած իր ներուժին տեղ դառնալ եւ գայն ճիշդ ու ամբողջական կերպով օգտագործել: Սփիւռքի ներուժին կազմակերպումը ու օգտագործումը անհրաժեշտութիւն են: Նման հսկայ ծրագիր կ'ենթադրէ հաւաքական ու հետեւողական աշխատանք»:

Յիշեալ երկու հոգակազմերուն մէջ, պարզել է յետոյ Սփիւռքի համայնքներուն ու կառոյցներուն դիմագրաւած մարտահրաւերները, շեշտեցինք, թէ հայ կեանքի բոլոր բնագաւառներէն ներս մարդուժի պակասը փաստօրէն սկսած է իր ներկայութիւնը զգալի դարձնել: Այլ խօսքով, բոլոր գաղութներէն ներս մասնագետ, փորձառու ու յանձնառու մարդոց թիւը սկսած է հետըզհետէ նուազիլ: Սա խորապէս մտահոգիչ երեւոյթ մըն է՝ թէ՛ համասփիւռքեան տարողութեամբ եւ թէ՛ իր աննախատեսելի հետեւանքներով: Արդարեւ, մեր կառոյցները կենսաւորողը, մեր համայնքները ծաղկեցնողը, Սփիւռքը որպէս հայակերպին գոյութիւն ամրապնդողը, անոր ազգային ինքնութիւնը պահողը եւ որակ ու ուղղութիւն տուողը իր մարդուժն է՝ հոգեմտաւոր պատրաստութիւն, մասնագիտական կազմաւորում ու ամբողջական նուիրում ունեցող մարդուժը: Այս խոր համոզումէն մեկնելով 2024 տարին կը հռչակենք՝

ՄԱՐԴՈՒԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

Աստուածաշունչը կը յիշեցնէ, թէ Աստուած տիեզերքի ստեղծագործութեան վեցերորդ օրը մարդը ստեղծեց (Շն 1.26-27, 2.7): Մարդու ստեղծագործութիւնը, յարաբերաբար տիեզերքի միւս արարածներուն, տարբեր էր ո՛չ միայն իր ժամանակով ու եղանակով, այլ նաեւ իր նպատակով: Աստուածաշունչը կը վկայէ, թէ «Աստուծոյ պատկեր»-ին համաձայն ստեղծուած մարդը կոչուած էր ըլլալու ստեղծագործութիւնը խնամողը, գայն պաշտպանողը ու հարստացնողը (Շն 1.28-30). այլ խօսքով՝ Աստուծոյ «գործակից»-ը (Ա. Կր 3.9-17): Ի՞նչ սրբազան կոչում...: Բայց մարդը դաւաճանեց իր աստուածատուր կոչումին, իրեն տրուած առանձնաշնչորհումը չարաշահեց գայն օգտագործելով իր հաճոյքին ու փառքին համար եւ իր անհաւատարմութեան հետեւանքով վտարուեցաւ դրախտէն (Շն 3):

Սակայն, Աստուած միշտ մնաց հոգածու մեղանչած մարդուն նկատմամբ: Աստուած իր Միածին Որդին աշխարհ դրկեց, որպէսզի իրմէ հեռացած մարդը մօտեցնէ իր երկնաւոր Զօր: Աստուծոյ Որդին մարդացաւ, եւ նոյնիսկ իր արիւնը թափեց, որպէսզի վերականգնէ մարդը իր աստուածային պատկերին եւ աստուածատուր առաքելութեան մէջ: Այս է Աստուածաշունչի, աստուածային յայտնութեան նպատակն ու պատգամը: Աստուածաշունչը յատուկ կարեւորութեամբ կը շեշտէ մարդուն իւրայատուկ տեղը ու եզակի դերը աստուածային յայտնութեան ու ծրագրին մէջ: Արդարեւ,

զանազան առակներու, դէպքերու եւ ուսուցումներու ճամբով, Աստուածաշունչին մէջ կը տեսնենք մարդուն, նոյնիսկ մեղաւոր մարդուն նկատմամբ Աստուծոյ ցուցաբերած հայրական սէրն ու հոգածութիւնը. այսպէս օրինակ, երբ հովիւը 99 ոչխարները կը ձգէ մէկ ոչխարի փնտռուելը կատարելու (Մտ 18.11-14), երբ հայրը իր անառակ որդին գրկաբաց կ'ընդունի (Ղկ 15.11-32): Աստուածաշունչը կ'ընդգծէ, թէ մարդը, այր թէ կին, արժեք է Աստուծոյ համար: Սակայն մարդուն արժեքը սոսկ իր ֆիզիքական գոյութեան մէջ չի կայանար, այլ՝ Աստուծոյ նկատմամբ իր ունեցած հաւատարմութեան ու հնազանդութեան մէջ:

Բոլոր կրօնները ու քաղաքակրթութիւնները յատուկ ուշադրութեան արժանացուցած են մարդը, որպէս մտածող, գործող, կառավարող եւ իր ստեղծագործ ոգիով ընկերութեան կեանքը զարգացնող եւ անոր իմաստ ու ուղղութիւն տուող իրականութիւն: Զին փիլիսոփաներուն, հոգեբաններուն ու ընկերաբաններուն կողմէ մարդը լուրջ վերլուծումի նիւթ դարձած է եւ կը շարունակէ դառնալ մասնաւորաբար արհեստագիտութեամբ տիրապետուած ներկայ աշխարհին մէջ: Ազգերու պատմութիւնը կը պարզէ, թէ բոլոր իրագործումներուն, գիւտերուն ու գարգացումներուն ետին կը գտնուի մարդը: Ահա թէ որքա՛ն առանցքային է մարդուն դերը տիեզերքին ու ընկերութեան կեանքին մէջ: Երկիրներ, համայնքներ, ընկերութիւններ, կազմակերպութիւններ կը գարգանան, կը յառաջդիմեն ու կը հզօրանան ո՛չ միայն իրենց ունեցած նիւթական հարստութեամբ, քաղաքական կամ գիտնորական առաւելութիւններով ու ներուժով, այլ՝ զանոնք հնարող, գարգացնող, կառավարող ու պաշտպանող մարդուժով:

Նշեցինք, ու դարձեալ կը շեշտենք, թէ հայ կեանքէն ներս մարդուժի պակաս կայ: Դժբախտաբար, մեր թերութիւնները, բացթողումները, տկարութիւնները տեսնելու եւ ընդունելու քաջութիւնը եւ իմաստութիւնը յաճախ կը պակսին մեզի: Զակամետ ենք ամեն բան վարդագոյն տեսնելու, սխալը ծածկելու եւ կամ սխալին պատճառը այլ տեղ փնտռելու: Կրօնական բարոյագիտութիւնը, ինչպէս ընդհանրապէս ժողովրդային իմաստութիւնը կը յուշէ, թէ սխալը ընդունելու յաջողութեան կէտ ճամբան է: Ընդհանուր ակնարկ մը մեր գաղութներու, համայնքներու, կազմակերպութիւններու ու կառոյցներու կեանքին վրայ, յստակօրէն ցոյց կու տայ, թէ մարդուժի պակասը հետզհետէ աւելի կը խորանայ ու կը ծաւալի, եւ անոր այլազան ու բազմազան բացասական հետեւանքները կը դառնան ակներեւ: Անընդունելի է այս մտահոգիչ կացութեան դիմաց անտարբեր մնալ: Զամասփիւռքեան այս յոյժ կարեւոր կարիքը դարձանելու հաւաքական աշխատանքին մէջ բոլորս ալ ընելիք ու տալիք ունինք: Քաջ պէտք է գիտնանք, որ առանց մարդուժի մեր կեանքը պիտի կորսնցնէ իր որակը, պիտի ճահճանայ ու գունաթափի եւ մեր գոյութեան արմատները պիտի տկարանան: Մարդուժի պատրաստութիւնը անյետաձգելի առաջնահերթութիւն է:

Ինչո՞ւ մարդուժի պակաս կայ Սփիւռքի կեանքէն ներս. ի՞նչ են ատոր պատճառները: Անհրաժեշտ է նման հարցադրումներ կատարել եւ առարկայական մօտեցումով փորձել պատասխաններ գտնել: Մարդուժի իմաստով այսօր հայ կեանքը հետեւեալ պատկերը կը պարզէ. - առաջին, մեր ունեցած ներկայ մարդուժը ընդհանրապէս չի համապատասխաներ ներկայ ժամանակներու կարիքներուն ու պահանջներուն: Երկրորդ, մեր մարդուժին կարեւոր մէկ մասը փաստօրէն կամ հայ կեանքի լուսանցքին վրայ կը գտնուի, եւ կամ հեռու է հայ կեանքէն:

ՆԵՐԿԱՅ ՄԱՐԴՈՒԹԻՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԶԱՅ ԿԵԱՆՔԵՆ ՆԵՐՍ

Մարդուժի վերակազմակերպման ու հզօրացման առաջին կարեւոր քայլը պէտք է ըլլայ՝ հայ կեանքի մայր էջէն հեռու գտնուող մեր մարդուժը ներգրաւել հայ կեանքէն ներս:

Պահ մը դիտենք մեր շուրջը. ճի՛շդ է, մասնագետներ ունինք զանազան մարդերէն ներս, սակայն անոնցմէ շատեր հեռու են մեր կեանքէն: Չարգացած երիտասարդներ ունինք, սակայն շատեր մասնակից չեն մեր կառոյցներու գործունեութեան: Նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիներ ունինք, սակայն շատեր կը գործեն ոչ-հայկական կրթական կառոյցներէն ներս: Ինչ-ինչ պատճառներով եւ զանազան բնագաւառներէն ներս հայ կեանքէն հեռու մնացած մարդուժին թուարկումը կարելի է շարունակել...: Այս տխուր իրականութենէն մեկնած, անհրաժեշտ է հարց տալ, թէ ինչո՞ւ մեր մարդուժին մէկ կարեւոր մասը հեռացած է մեր համայնական կեանքէն: Զարցադրումները մեզ պէտք է մղեն ախտաճանաչումի, եւ ախտաճանաչումը՝ սրբագրումի: Բոլոր պարագաներուն, մեր մօտեցումը պէտք է ըլլայ իրատես, ո՛չ զգացական. գործնական, ո՛չ տեսական. տեղական, ո՛չ ընդհանրական: Զարկ է նկատի ունենալ Սփիւռքի զանազան շրջաններուն դիմագրաւած աշխարհաքաղաքական պայմանները եւ անոնց հետեւանքով յաճախ տեղի ունեցած ներքին տեղաշարժերը, տնտեսական պատճառներով որոշ գաղութներու փոկարացումը եւ այլ գաղութներու ծաւալումը, համայնքներու նկարագրի փոփոխութիւնը, շրջապատային պայմաններու տարբերութիւնը, եւլն.: Տակաւ շարունակուող այս բոլոր գարգացումները հարկ է արժեւորել հայ կեանքէն ներս իր ներկայութիւնը հաստատած համաշխարհային մշակոյթի լոյսին տակ: Բնականաբար, յիշեալ երեւոյթները իրենց բացասական անդրադարձը ունեցած են որոշ թիւով մարդուժի թէ՛ հայ կեանքէն հեռացման եւ թէ՛ գաղութ մը այլ գաղութ տեղափոխման վրայ:

Վերոյիշեալ արտաքին ազդակներուն կողքին, նաեւ ներքին եւ անձնական պատճառներ ոմանց մղած են հեռու մնալու մեր հաւաքական կեանքէն: Այսպէս, համայնքային ղեկավարութեան ցուցաբերած երբեմն անտարբեր մօտեցումները եւ երբեմն միակողմանի դիրքորոշումները գաղութը յու-

Սկզբ՝ էջ 4

գող հարցերուն նկատմամբ, կառոյցներու կեանքէն ներս երեւան եկող մրցակցութիւնները, հին եւ նոր սերունդներու անյարիր մտածելակերպերը, մարդու ճիշդ եւ արժանի գնահատանքը կատարելու պակասը, ինչպէս նաեւ անելի լայն հորիզոններու բացուելու եւ անելի բարձր նիւթական եկամուտ ապահովելու ցանկութիւնները, եւ այլն:

Այս մտահոգիչ երեւոյթին դիմաց, չենք ուզեր այսպէս ռիսկոյն մնացողները եւ ոչ ալ անոնց հեռու մնալուն պատճառ հանդիսացած կառոյցները կամ պատասխանատուները: Կ'ուզենք բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ շեշտել, թէ անելի քան երբեք հրամայական է, որ գանազան պատճառներով հայ կեանքէն հեռու գտնուող մեր մարդու մտնայ հայ կեանքին, մասնակից դառնայ մեր հաւաքական ապրումներուն, մաքառումներուն, ծրագիրներուն ու աշխատանքներուն: Այս հաստատ կամեցողութիւնը ու գիտակից յանձնառութիւնը կը սպասենք հեռու մնացողներէն: Միաժամանակ՝ կը սպասենք, որ պատասխանատու մարմիններ լայն կարելիութիւններ ստեղծեն մեր մարդու յետեւ յատկապէս երիտասարդ ուժերուն, գանակը ներգրուելով մեր կառոյցներէն եւ ընդհանրապէս հայ կեանքէն ներս: Մեզի համար սիրելի եւ յարգելի է մեր մարդու շեշտաբար, ընդունելի չէ, որ մեր մարդու կազմող անձինք ուրիշներուն դռները թակեն, ուրիշներուն ծառայեն, իրենց մասնագիտութիւնը ու փորձառութիւնը ի սպաս դնեն ուրիշներու յաջողութեան: Մեզի համար առաջնահերթը, հիմնականը, մնայունը մեր ազգն է, մեր հայրենիքն է, մեր գաղութներն են:

ՆՈՐ ՄԱՐԴՈՒԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Մարդու լայն կազմակերպման ու հզօրացման երկրորդ կարեւոր քայլը պէտք է ըլլայ նոր մարդու լայն պատրաստութիւնը: Սա դիւրին ու հեզասահ եւ անմիջական կերպով իրագործելի ծրագիր մը չէ: Հարկ է ըլլալ իրապաշտ: Մարդու լայն պատրաստութիւնը կ'ենթադրէ երկարաշունչ գործընթաց, ամբողջական նուիրում, լուրջ կազմակերպութիւն, հետեւողական աշխատանք եւ նաեւ՝ նիւթական լայն ներդրում: Նայեցէ՛ք ձեր շրջապատին: Պետութիւններ, կրօններ, կազմակերպութիւններ, կառոյցներ հսկայ աշխատանք կը տանին ու մեծ ներդրում կը կատարեն, նիւթական թէ այլապէս, մարդու լայն պատրաստութեան ի խնդիր: Արդարեւ, առանց գիտակից, մասնագետ ու նուիրեալ մարդուն, մեր ունեցածը՝ նիւթական սկսեալ միջին եւ հոգեւոր, կրթական սկսեալ միջին քաղաքական, ո՛չ մէկ արժէք կը ներկայացնէ: Մարդն է որ անոր արժէք, իմաստ, որակ, ուղղութիւն ու նպատակ կու տայ:

Արդ, ժամանակը հասած է, որ այս գիտակցութենէն ու համոզումէն մեկնած, Սփիւռքի մէջ մեր ուշադրութեան սլաքը կեդրոնացնենք մարդու լայն պատրաստութեան վրայ, մեր ունեցած ներուժին եւ կարելիութիւններուն ամբողջական օգտագործումով: Մարդու լայն պատրաստութիւնը կը նշանակէ հայ մարդը հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներով շարժախել, մեր ազգին անցեալի ու ներկայի յատկանշական դէպքերուն, դէմքերուն ու մարտահրաւերներուն ծանօթացնել, ներկայ աշխարհին մասնագիտութիւններուն մէջ խորանալու կարելիութիւնը ընծայել, այս բոլորէն վեր ու այս բոլորը իմաստաւորող՝ մեր ժողովուրդին ամբողջական նուիրումով ծառայելու ոգին ներարկել, հայ կեանքին բերելու իր գործուն մասնակցութիւնը:

Ինչպէ՞ս կարելի է Սփիւռքը կազմակերպ մտնեցնել ու վերանորոգ թափով մղել մարդու լայն պատրաստութեան: Հարկ է ի միտի ունենալ, թէ մարդու լայն պատրաստութիւնը սոսկ տուեալ կառոյցի մը աշխատանքը չէ, այլ հաւաքական աշխատանք է ու հետեւողական գործընթաց՝ գանազան հանգրուաններէ ընթացող ու նախաձեռնութիւններ ներառող: Ամփոփ գիծերով կ'ուզենք յիշել այն կառոյցներն ու միջոցները, որոնք կարեւոր նպաստ կրնան բերել մարդու լայն պատրաստութեան առաքելութեան .-

1) Մարդու լայն պատրաստութեան հիմնական ու մնայուն խարխիւր ՇՆՏԱՆԻՔԸ է: Հայ մարդու կազմակերպման ամուր հիմքը կը դրուի ընտանիքէն ներս: Մեր ծնողներէն շատ բան կը սորվինք լսելով ու տեսնելով: Մեր ծնողներէն միայն մեր ազգին առնչուած գիտելիքներ չենք ստանար, այլ նաեւ ու մանաւանդ գիտակից ու հպարտ հայ ըլլալու ոգին եւ անսակարկ կերպով մեր ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ ծառայելու նուիրումը: Արդ, անհրաժեշտ է, որ հայ ընտանիքը վերաշեշտ մարդու լայն գծով իր եզակի դերակատարութիւնը: Այս յոյժ կարեւոր առաքելութիւնը վերանորոգ նուիրումով կատարելու համար հայ ընտանիքը կոչուած է հեռու մնալ այնպիսի երեւոյթներէ, որոնք կրնան աղարտել իր բարոյական մթնոլորտը ու հայադրոշմ նկարագիրը եւ նսեմացնել վեհ կոչումը:

2) Մարդու լայն պատրաստութեան երկրորդ վայրը ԵԿԵՂԵՑԻՆ է: Եկեղեցին մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու պահպանման հնոցն է ու կենսաւորման աղբիւրը: Մեր ազգի մեծերէն շատեր եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան հետ իրենց անձը շարժախառն են եւ ազգին ու հայրենիքին ծառայելու նախաձեռնութիւններն ու յանձնառութիւնը եկեղեցիէն ստացած: Չնայած ան նախաձեռնութիւններու ճամբով (կիրակնօրեայ վարժարան, Սուրբ Գրոց սերտողութիւն, ժողովրդային լսարաններ, քրիստոնէական դաս տիարակութիւն, եւլն...) անհրաժեշտ է որ մեր եկեղեցին իր հոգեւոր առաքելութեան ու ազգային ծառայութեան առընթեր, նաեւ զարկ տայ յատկապէս իր ուսուցողական ու դաստիարակչական աշխատանքներուն:

3) Մեր Սուրբ Աթոռի ԴՊՐԵՎԱՆՔԻՆ նպատակը կը շարունակէ մնալ հոգեմտաւոր արժէքներով թրծուած եւ ազգին ու եկեղեցւոյ ծառայելու կոչումը ունեցող հոգեւորականներու, ուսուցիչներու ու մտաւորականներու կազմակերպումը: Այս ուղղութեամբ անցնող տասնեակներուն հսկայ աշխատանք

է կատարած Դպրեվանքը: Արդարեւ, Դպրեվանքէն անցած եւ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ մեր ազգային կեանքի հոգեւոր, կրթական ու մշակութային բնագաւառներէն ներս կարեւոր ներդրում բերող մեծ թիւով անձերու ներկայութիւնը՝ պերճախօս վկայութիւն մըն է Դպրեվանքին վիճակուած եզակի առաքելութեան:

4) ՀԱՅ ԴՊՐՈՅԸ, բնականաբար, մարդու լայն պատրաստութեան կարեւոր կառոյցներէն մէկն է: Ներկայ ժամանակներուն, դժբախտաբար մեր ծնողներուն մօտ սկսած է որոշ անտարբերութիւն մը ի յայտ գալ հայ դպրոցին նկատմամբ: Պետական քննութիւններուն իր ձեռք ձգած յաջողութիւններով, իր ջամբած հայեցի դաստիարակութեամբ ու հայակերտ մթնոլորտով հայ դպրոցը մեծապէս կը նպաստէ մարդու լայն պատրաստութեան: Հետեւաբար, անհրաժեշտ է վերաշեշտել հայ դպրոցին մարդակերտումի առաքելութիւնը՝ զօրավիգ կանգնելով անոր նպաստող ծրագիրներուն:

5) Հայ կեանքէն ներս գործող ԲՈՒՆՆԻ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ՝ կուսակցական, բարեսիրական, մշակութային, մարզական, ընկերային, եւլն. իրենց կարգին մարդու լայն պատրաստութեան իւրայատուկ դպրոցներ են: Արդարեւ, ազգային ու մշակութային արժէքներով լեցուն իրենց ներքին մթնոլորտը, ինչպէս նաեւ մեր համայնքներու կարիքներուն ծառայելու իրենց կամաւոր աշխատանքը այլապէս կը նպաստէ մարդու լայն պատրաստութեան: Ունինք ազգայիններ, որոնք գանազան պատճառներով հայ դպրոց չեն յաճախած, սակայն մաս կազմելով համայնքային կազմակերպութիւններու, հայ կեանքի մասին լայն ծանօթութիւն ձեռք ձգած են եւ իրենց մէջ արմատ նետած է ազգին ծառայելու ոգին:

6) ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ մարդու լայն կազմակերպման մէջ էական դեր ունին: Այսօր, փաստօրէն, Սփիւռքի մէջ միակ կազմակերպութեամբ Հայագիտական Կեդրոնը Կաթողիկոսարանէն ներս կը գործէ: Հարկ է նաեւ յիշել Հայկէպի Զարէն Եփփէ Ճեմարանին ու Հայկազեան Համալսարանին հայագիտական դասընթացները: Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնը վերջին 15 տարիներուն ինքնակազմակերպման հանգրուաններէ անցնելէ յետոյ, այսօր իր դասանիւթերու այլապէս անութեամբ եւ Հայաստանէն ու Սփիւռքէն հրաւիրուած փորձառու ուսուցիչներու ներկայութեամբ, կը գործէ առաւել կազմակերպ ու ինքնավստահ կերպով:

7) Կաթողիկոսարանէն ներս գործող ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՂՈՆԸ, նպատակ ունենալով մանկավարժական նոր մեթոտներով ուսուցիչներու վերաորակաւորումը, յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէ այս մարզէն ներս: Աւելի քան 35 տարիներու իր գործունեութիւնը եւ մասնաւորաբար պետական քննութիւններուն մէջ ձեռք ձգած յաջողութիւնները ցոյց կու տան, թէ մանկավարժական կազմակերպման ծիրէն ներս իր տարած աշխատանքը կը մնայ առանցքային:

8) Մարդու լայն պատրաստութեան վերոյիշեալ համայնքային կառոյցներէն անդին, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԿԱՆ ՌԻՍՈՒՄԸ կը նկատենք էական, ինչպէս նաեւ ամբողջացուցիչ մասը մարդու լայն պատրաստութեան: Ներկայ աշխարհը մասնագիտութեան աշխարհ է: Ընկերութեան կեանքի բոլոր մարզերէն ներս հարցերուն, երեւոյթներուն, տագնապներուն ու ծրագիրներուն նկատմամբ սիրողական մօտեցում փաստօրէն այլեւս տեղ չունի: Որքան ալ նուիրում ու պատրաստակամութիւնը անհրաժեշտ նկատուին, նոյնքան անհրաժեշտ է մասնագիտութիւնը: Ներկայ ժամանակներուն համալսարանական բարձրագոյն ուսման կեդրոնները ու կարելիութիւնները բազմապատկուած են: Ծարտարագիտութեան ընձեռած լայն միջոցներու լոյսին տակ, համալսարանական ուսումը եղած է անելի դիւրահաս եթէ ոչ նիւթական, գէթ ժամանակի ու աշխատանքի իմաստով: Հարկ է որ մեր ուսումնաստեղ երիտասարդ-երիտասարդուհիները առաւելագոյն չափով օգտուին համալսարանական բարձրագոյն ու մասնագիտական ուսման ընձեռած բարիքներէն:

Բնականաբար, տարբեր պայմաններու մէջ ապրելով, սպասելի չէ որ նոր սերունդը մարդու լայն կազմակերպման նշուած հանգրուաններէն անցնի: Ինքնուսումը եւս կարելիութիւն կու տայ եւ իր կարեւոր ներդրումը կրնայ ունենալ մարդու կազմակերպման մէջ: Բոլոր պարագաներուն, հրամայական է, որ հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներով շարժախառն եւ մասնագիտական ուսումով գինուած հայ երիտասարդ-երիտասարդուհին ինքզինք արժեւորէ հայ կեանքէն ներս՝ իր ուսումը ծառայութեան ճամբով ի սպաս դնելով մեր ազգին զարգացման ու հզօրացման: Սփիւռքը անյետաձգելի կարիքը ունի մարդու լայն պատրաստութեան, մարդու լայն պատրաստութիւնը Սփիւռքին համար պէտք է դառնայ առաջնահերթութիւն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարդու լայն պատրաստութեան գծով Մեր պարզած մտահոգութիւններուն, մատնանշած կարելիութիւններուն ու կատարած ընդգծումներուն լոյսին տակ, կ'ուզենք հետեւեալ գործնական թելադրութիւնները կատարել .-

1) Հակառակ Սփիւռքի դժուար պայմաններուն ու սահմանափակ միջոցներուն, մարդու լայն պատրաստութեան գծով հսկայ աշխատանք է կատարուած: Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք մարդակերտումի ու հայակերտումի սրբազան առաքելութեան լծուած բոլոր նուիրեալներուն: Ժամանակը հասած է, որ գաղութներէն ներս մարդու լայն պատրաստութեան նուիրուած մեր կառոյցներուն գործունեութիւնը ըլլայ անելի ներդաշնակ, համադրուած ու համապատասխան ներկայ իրականութիւններուն եւ սպասումներուն: Այս ուղղութեամբ անհրաժեշտ է, որ ծրագրաւորումի յատուկ աշխատանք կատարուի կառոյցներու պատասխանատուներուն մասնակցութեամբ՝ կրկնութիւններէ ու բացթողումներէ խուսափելու համար:

2) Գաղութներէն ներս մարդու լայն պատրաստութեան կազմակերպումը կը նկատենք անյետաձգելի անհրաժեշտութիւն: Համախափումը կարելի է կատարել երկու

Թուրքիոյ նուրջ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՎԱՐԱՆ՝ ԱՅՄՊԷՍ ԿՈՉՈՒՄՑ «ՉԱՆՁԵԳՈՐԻ ՄԻՋԱՆՃԸ»-ԻՆ ՄԱՍԻՆ

10 Յունուարին Ատրպէյճանի Նախագահ Իլիհամ Ալիեւ ատրպէյճանական լրատուամիջոցներուն տուած հարցազրոյցին ընթացքին, խօսելով, այսպէս կոչուած, «Չանգեգուրի միջանցք»-ին մասին, յայտարարած է, որ



Եթէ «Չանգեգուրի միջանցք»-ը չբացուի, Ատրպէյճան մտադիր չէ Յայաստանի հետ մէկ այլ հատուածի մէջ սահման բանալ: Ան միաժամանակ «միջանցք»-ին առնչուող իրենց ընկալումը ներկայացուցած է այսպէս: «Ատրպէյճանէն Ատրպէյճան (Նախիջեւան-թարգմ.) ուղղուող բեռները, քաղաքացիները եւ ցամաքային ճամբաները ազատ պէտք է ըլլան՝ առանց որեւէ ստուգումէ անցնելու, մաքսային վարչարարութեան մէջ ներգրաւուելու: Ինչ կը վերաբերի միւս երկիրներու բեռներուն, եթէ, օրինակ, Միջին Ասիայէն դէպի Թուրքիա որեւէ բեռ Յայաստանի տարածքով դրկուի եւ եթէ Նոյնիսկ Ատրպէյճանէն դէպի Թուրքիա որեւէ բեռ դրկուի, անշուշտ, բոլոր մաքսատուրքերը պէտք է վճարուին»:

Սա պաշտօնական Պաքուէն այսպէս կոչուած, «Չանգեգուրի միջանցք»-ի մասին հնչած վերջին յայտարարութիւնն է: Այս յայտարարութեան առնուազն առաջին մասը անտեղի եւ շինծու կը դարձնէ Նոյն հարցազրոյցին մէջ Ալիեւի արտայայտած գարմանքը, թէ Յայաստանին կը գայրացնէ «միջանցք» բառը, միւս կողմէ «միջանցք» որեւէ երկրի ինքնիշխանութիւն կասկածի տակ չի դնէր:

Իսկ ի՞նչ կը յայտարարէ պաշտօնական Անգարան այսպէս կոչուած «Չանգեգուրի միջանցք»-ին մասին: Այս կիւսին գծով ինչպիսի՞ յայտարարութիւններ կատարած են թուրք բարձրաստիճան պաշտօնեաները վերջին շրջանին:

Ermenihaber.am-ը առանձնացուցած է ժամանակագրական կարգով ներկայացուցած է 2023-ի տարեվերջին ու 2024-ի տարեկիզբին Թուրքիայէն հնչած յայտարարութիւնները: Ստորեւ կը ներկայացնենք Թուրքիոյ Նախագահին արտայայտութիւնները այս գծով.

ԹՈՒՐԵԻՈՅ ՆԱԽԱԳԱՅ ՌԵՃԵՊ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

19 Սեպտեմբեր 2023-ին Ատրպէյճանի կողմէ արցախահայութեան դէմ սկիզբ առած ցեղային գտման ռազմական հերթական փուլի մեկնարկին օրը ՄԱԿ-ի ընդ. ժողովին իր ունեցած ելոյթին մէջ Թուրքիոյ Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան բառացիօրէն յայտարարած է. «Ի սկզբանէ աջակցած ենք Ատրպէյճանի եւ Յայաստանի միջեւ բանակցային գործընթացին: Սակայն կը տեսնենք, որ Յայաստան այս պատմական կարելիութիւնը բաւականաչափ չի գնահատեր: Կը սպասենք, որ Յայաստան կատարէ իր խոստումները՝ Չանգեգուրի միջանցքի բացման գլխաւորութեամբ»:

26 Սեպտեմբեր 2023-ին Էրտողան Նախիջեւան կատարած այցելութենէն յետոյ Անգարա վերադառնալէն ետք լրագրողներու հարցերուն ի պատասխան նշած է. «Չանգեգուրի միջանցքով ցամաքային եւ երկաթուղային ճանապարհներով Նախիջեւանի եւ Ատրպէյճանի այլ շրջաններու հետ մեր ուղղակի կապին հաստատումը կ'ամրապնդէ մեր յարաբերութիւնները: ... Մենք կարելի ամէն ջանք պիտի գործադրենք, որ այս միջանցքը հնարաւորինս շուտ բացուի: Թուրքիոյ եւ Ատրպէյճանի համար շատ կարեւոր այս միջանցքի կեանքի կոչումը ռազմավարական հարց է եւ անսպասելի պէտք է աւարտին հասնի: Երբ այս միջանցքը բացուի, Պաքուէն դուրս ելող մեքենան կամ գնացքը կրնան անմիջապէս հասնիլ Կարս: Թուրքիոյ եւ Ատրպէյճանի եղբայրութիւնը շատ ատելի կ'ամրապնդուի: Իրանէն եւս այս հարցին շուրջ դրական ազդակներու յղումը յուսադրիչ է: Մեր փափաքն է

այս վայրերը դարձնել խաղաղութեան միջանցք ... Եթէ մտածենք, որ ատիկա երկաթուղային համակարգ է, Թուրքիայէն ելող գնացքը Նախիջեւանով, Յայաստանով կ'անցնի եւ կը հասնի Ատրպէյճան: Ինչ կը վերաբերի Յայաստանով անցնելու հարցին, եթէ Յայաստան այս ճանապարհը չբանայ, ինչպէ՞ս պիտի անցնի: Իրանով պիտի անցնի: Իրան հիմա այդ հարցին դրական արձագանգ կու տայ, հետեւաբար կարելի է Իրանի տարածքով Ատրպէյճան անցնելու հնարաւորութիւն ստեղծուի»:

9 Յոկտեմբեր 2023-ին Էրտողան կառավարութեան նիստի աւարտին յայտարարած է. «Կը շնորհաւորենք Ղարաբաղի մէջ մեր ատրպէյճանցի եղբայրներուն վճռական եւ խիզախ պայքարով ձեռք բերուած յաղթանակը: Յայաստանի դեկաւարութենէն մեր ակնկալութիւնը խելամիտ եւ իրաւական ճամբու լոյսին ներքոյ, խաղաղութեան, ապահովութեան եւ բարօրութեան միտուած քաղաքականութեան հետեւիլն է: Եթէ Յայաստան այս ձեռով շարժի եւ իր տուած խոստումը պահէ Չանգեգուրի միջանցքին գծով, անգամ մը եւս կը փափաքեմ յայտնել, որ պատրաստ ենք մեր յարաբերութիւնները Յայաստանի դեկաւարութեան հետ քայլ առ քայլ գարգացնելու»:

3 Նոյեմբեր 2023-ին, «Թրքական Պետութիւններու Կազմակերպութեան» 10-րդ գագաթնաժողովին ունեցած իր ելոյթին մէջ Էրտողան յայտնած է. «Յայաստան պէտք է կատարէ Ատրպէյճանին նկատմամբ իր պարտականութիւնները: Մեծ կարեւորութիւն ունի նաեւ Ատրպէյճանի արեւմտեան շրջանները եւ Նախիջեւանը իրար կապելիք ցամաքային գիծին կեանքի կոչումը: Գիծին բացումը լուրջ ներդրում պիտի ապահովէ տարածաշրջանի երկիրներու բարօրութեան, Թուրքիան ալ պիտի կապէ մեր պապերու հայրենիքին՝ Միջին Ասիային: Այս գործընթացի յաջողութեան ամբողջացման համար որպէս թրքական աշխարհի պէտք է շարունակենք մեր աջակցութիւնը Ատրպէյճանին»:

9 Նոյեմբեր 2023-ին Ուզպեքիստանի «Տնտեսական Համագործակցութեան Կազմակերպութեան» նիստին եւս ելոյթ ունեցած Էրտողան յայտնած է. «Յայաստանի կողմէ Ատրպէյճանի նկատմամբ պարտաւորութիւններու կատարումը այս գործընթացը պիտի դիւրացնէ: Ատրպէյճանի արեւմտեան շրջանները եւ Նախիջեւանը իրար կապելիք ցամաքային գիծերու հնարաւորինս շուտ հիմնումը/ձեւաւորումը ռազմավարական կարեւորութիւն ունի»:

Սկիզբ՝ էջ 5

հանգրուաններով: Առաջին հանգրուանին կը մասնակցի գաղութն ներս գործող մարդուժը եւ երկրորդ հանգրուանին՝ նաեւ գաղութն հեռու մնացած մարդուժը:

3) Բոլոր պարագաներուն համախմբումները անհրաժեշտ է որ կազմակերպուին յստակ օրակարգի մը հիման վրայ: Հարկ է լսել ներկաներուն տեսակետները, մտահոգութիւնները ու առաջարկները, եւ ապա միասնաբար գաղութին հզօրացման առնչուած ընդհանուր ուղեգիծ մը ճշդել՝ առաջնահերթութիւններու յստակեցումով ու աշխատանքի բաժանումով:

4) Հարկ է յատուկ կարեւորութիւն ընծայել երիտասարդ-երիտասարդուհիներու մասնակցութեան՝ ներառելով յատկապէս համալսարանականներն ու համալսարանաւարտները:

5) Անհրաժեշտ է որոշ առիթներով եւ Նոյնիսկ հանգրուանային կերպով գաղութին մարդուժը համախմբող հաւաքներ կազմակերպել՝ քննարկելու թէ՛ գաղութին հետ աղերս ունեցող ընդհանուր ծրագիրներ եւ թէ՛ համասփիւռքեան ու համագային մտահոգութիւններ ու մարտահրաւերներ:

6) Գաղութի մը մարդուժին ամբողջական ցանկագրումը կը նկատենք խիստ անհրաժեշտ: Աշխատանք մը, որ ներառէ հիմնական տեղեկութիւններ, որպէսզի կարելի ըլլայ գայն փոխանակել այլ գաղութներու հետ, համասփիւռքեան տարողութեամբ մարդուժի ամբողջական պատկերը ունենալու համար:

7) Թելադրելի է, որ յիշեալ յոյժ կարեւոր աշխատանքներուն իրենց գործուն մասնակցութիւնը բերեն թեմական, կուսակցական, կրթական, երիտասարդական, մշակութային, բարեսիրական եւ այլ կառոյցներու գործադիր մարմինները:

8) Ինչպէս յայտնեցինք, մարդուժի պատրաստութիւնը նաեւ կը պահանջէ նիւթական յանձնառութիւն: Համայնական այս ճիգին մէջ մեր ունեւոր ազգայինները պարտաւոր պէտք է զգան այս ուղղութեամբ կարեւոր ներդրում կատարելու, հիմնադրամներու հաստատումով կամ տարեկան նպաստներու յատկացումով՝ ընդհանրապէս մարդու պատրաստութեան լծուած ծրագիրներուն եւ մասնաւորաբար այն կառոյցներուն, որոնք կը ծառայեն Նոյն նպատակին համար:

9) Մեր թեմերը ու կառոյցները իրենց գործունեութեան օրակարգին վրայ կարեւոր տեղ պէտք է յատկացնեն մարդուժի պատրաստութեան հետ աղերս ունեցող նախաձեռնութիւններուն ու աշխատանքներուն:

Սփիւռքի վերակազմակերպման ու վերակենսաւորման աշխատանքները յղացողը, ծրագրողը եւ գործադրողը մեր մարդուժը պիտի ըլլայ: Արդ, որքան էական է մարդուժը մեզի համար եւ հետեւաբար՝ որքան հրամայական եւ անյետաձգելի մարդուժի պատրաստութիւնը:

Այս մտածումներով ու սպասումով, հայրական ջերմ սիրով կ'ողջունենք ձեզ, եւ կը վստահեցնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ պատրաստ է գօրակից ու գործնապէս մասնակից դառնալու մարդուժի պատրաստութեան նուիրական առաքելութեան:

Պրիմակետ

ԱՇԽԱՐՀ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ



Սարգիզ Երամեան

Վերջին յօդուածին՝ «Սիրոյ Պատմութիւն Մը» ստեղծած հետաքրքրութիւնը, մանաւանդ ընթերցողներէն մեկուն շեշտը «... պիտի դարձնէր գիրքը կարելորդ՝ Սփիւռքի նոր ժամանակներու պատմութեան համար» մտածել տուաւ, որ թերեւս լաւ կ'ըլլայ մանրամասնել «կարելորդ՝ Սփիւռքի պատմութեան համար» բաժինը եւ ներկայացնել հատորին յառաջաբանը, յապաւումներով:

Թեւ ճիշդ 107 տարիներ անցած են այս հատորին առաջին նամակին գրութենէն, սակայն նամակներու ամբողջութիւնը կը պահէ իր հետաքրքրականութիւնը, քանի մը մակարդակներու վրայ՝ անհատական, եգիպտական թէ գաղութային:

Պետք է նշել նաեւ, որ հրատարակուած նամակները միայն ճանկի 3. Չագըրի գրածներն են, առանց Սաթենիկ Թոփալեանի պատասխաններուն:

-Այս նամակները կարելորդ են, որովհետեւ սեւեռումի կը բերեն ԶԲԸ Միութեան կազմակերպիչ խումբին եւ առաջին յանձնախումբին անդամներէն մեկը, որպէս անհատականութիւն, մտածելակերպ եւ աշխատելաձեւ:

-Լուսարձակի տակ կ'առնեն Զամաշխարհային Ա. Պատերազմի շրջանը Եգիպտոսի մէջ ընդհանրապէս եւ եգիպտահայ գաղութին կեանքը մասնաւորապէս:

-Կը նկարագրեն կարելորդ դէպքեր եւ իրադարձութիւններ, որոնք կըրնային մուշ մալ, Զամաշխարհային Ա. Պատերազմին ստեղծած թոհուր-հին մէջ:

-Մանրամասնորէն կը նկարագրեն Փոր-Սախտի գաղթականներու գեմփը, որովհետեւ ճ. Չագըր գործունէայ անդամ էր գեմփով զբաղող յանձնախումբին:

-Կը յիշեն անունները եւ նկարագրերը եգիպտահայ գաղութի անդամներէն ոմանց, որոնք դէր ունեցած են գաղութահայ կեանքին մէջ, բայց որոնց անուններն ու կեանքին մանրամասնութիւնները կորսուած են, ինչպէս օրինակ Կամսարական եւ Մելքոնեան ընտանիքները:

-Կը նկարագրեն Եգիպտոսի կարելորդ վայրերը - ինչպէս Լուքսոր, ուր ճանկի յաճախ գացած է գործի բերումով - հողագործութեան ու մանաւանդ այգեգործութեան եւ գինեգործութեան սկիզբի շրջանը, ինչ որ կարելորդ կը նկատենք Եգիպտոսի այդ ժամանակաշրջանի պատմութեան համար:

-Մանրամասնորէն կը նկարագրուի Զայկական Կարմիր Խաչի կազմակերպումը Եգիպտոսի մէջ:

-Նամակներէ գատ այլ թուղթեր եւս՝ նուագահանդէսներու յայտագրեր, տեղի եւ ժամանակի արձանագրութեամբ, որոնք այնքան շատ բան կրնան բացայայտել 1917-ականներու Գահիրէի մասին՝ սրահներ, որոնք յիշուած են իրենց ճշգրիտ եւ ամբողջական հասցէներով, ելոյթ ունեցած արուեստագետներուն եւ երաժիշտներուն անուններով, որոնցմէ շատեր այցելու եղած են Գահիրէի (Նամակ թիւ 26):

- «Կանոններ» խորագրուած առանձին թուղթ մը, ուր ներկայացուած են «Keep smiling» կազմակերպութեան 12 կետերէ բաղկացած կանոնները:

70 նամակներ, երեք տարիներու վրայ երկարող, մօտաւորապէս տարին 23, ամիսը 2 նամակ միջինով:

Սկիզբի տարին՝ 1917-ին, նամակներուն թիւը ցանցամ է՝ ամիսը մէկ նամակ. երկրորդ տարին նամակագրութիւնը կը սկսի թափ առնել, հասնելու համար երբեմն շաբաթը երկու նամակի. եւ թէ նկատի առնենք իւրաքանչիւր նամակի էջերուն թիւը՝ յաճախ մինչեւ 20-30 էջ, կը հասկնանք թէ ուրկէ՛ կու գայ այս գիրքին ծաւալը:

Պետք է ընդունիլ, որ ճ. Չագըր վաւերական նամակագիր մըն է, որուն համար ամենէն փոքր դէպքերն ու երեւոյթները առիթ կու տան երկար մտորումներու, յաճախ բազմաթիւ՝ 10-էն մինչեւ 30 էջերու վրայ երկարող: Օրինակ մըն է միայն թիւ 27 նամակը, որուն մէջ Չագըր կը խօսի Սաթենիկին դրկած դիմանկար-լուսանկարներուն մասին, կը նկարագրէ իր տպաւորութիւնները եւ անհատականութեան խորունկ վերլուծումներու կ'երթայ:

Նոյն այս նամակին մէջ է, որ Չագըր կը սկսի խօսիլ բնութենէն կրած իր ծանր ազդեցութեան եւ ունեցած յարաբերութեան մասին, խորանալով եւ հասնելով մէթաֆիզիք տարածքներու: Այս գիծը իր նամակներուն մէջ կը շարունակուի, յաճախ հասնելով իրապէս մեծ խորութիւններու եւ հաստատելով այն տպաւորութիւնը, թէ ա. այս նամակները օրագրութեան այլ ձեւ մըն են - բան մը, որուն վարժ էր Չագըր, իր պահած օրագրութիւններով, որոնց մասին թեւ կը խօսի, բայց գաւառը չկրցանք գտնել իր թողօնի մէջ-եւ բ. այս նամակները միջոցներ են իր տպաւորութիւններն ու կրած ազդեցութիւնները կարգի դնելու, դաստաստելու եւ յստակօրէն ներկայացնելու համար:

14 Օգոստոս 1917-ին Սաթինի գրած նամակին մէջ, պատասխանելով աղջկան հարցումին, ճանկի Չագըր մանրամասնորէն կը նկարագրէ իր կեանքին սկիզբի տարիները, մինչեւ 1900 թուականի Զոկտեմբերին Աղեքսանդրիա (Եգիպտոս) հասնիլը եւ երկու օր ետք Գահիրէ երթալը:

ճանկի Չագըրի կենսագրութիւնը կը գտնենք ոչ միայն Սաթինի գրած

իր նամակներուն մէջ, այլ նաեւ իր ժամանակին լոյս տեսած քանի մը գիրքերու մէջ, որոնք կենսագրութեան կողքին արձանագրած են, իր տարած կարելորդ եւ ազգանուէր աշխատանքները:

Այսպէս, 1919-ին լոյս տեսած տոքթոր Մ. Սալբիի «ԱԼԵԱԿՆԵՐ ԵՒ ԽԸԼԵԱԿՆԵՐ», հայ վրանաքաղաքին տարեգիրքը» հատորին էջ 164-165-ին վրայ կը կարդանք.

«Տոքթ. Սերոբեանի վարչութեան օրով եթէ կայ անձաւորութիւն մը որ կեդրոնակապ ուժը եղած է յիշեալ վարչութեան Գահիրէի հատուածին, գանձապետ Պր. Ճանկի Չագըրն է: Յիշեալը իր ուշիմութիւնով, գործնական ուղղամիտ ոգիովը, անուրանալի կարողութիւնովը եւ անզիական ու ամերիկեան պաշտօնական շրջանակներու մէջ իր վայելած մասնաւոր յարգանք ու համակրութիւնովը, չափազանց օգտակար եղած է Բօր Սախտի-Կարմիր Խաչի կազմին: Այնպէս որ գլխաւորաբար իր շնորհիւ, առանց ամենափոքրիկ ձգձըգումներու ներքին, մատակարարական խնդիրները ամիս ամիս եւրոպական ճշդապահութիւնով կարգադրուած եւ յաճախ իր գաղթավայր այցելութիւններուն շնորհիւ՝ անզիական վարչութեան հետ հարթուած են, որոնք նիւթական մեծ առաւելութիւններ ապահոված են Զայ Կարմիր Խաչի տեղական կազմին համար»:



A WORLD IN LETTERS Personal Letters of Janig H. Chaker
A WORLD IN LETTERS Personal Letters of Janig H. Chaker
Personal Letters (1916-1919) of Janig H. Chaker
Cairo 2023

Իսկ Վահան Չարդարեան, իր նշանաւոր «Յիշատակարան»-ին «Տարեգիրք 1941 Տարուայ» համարին մէջ աւելի քան հինգ էջ կը տրամադրէ անոր կենսագրութեան եւ աշխատանքին, ու կ'ըսէ թէ այդ կենսագրութիւնը քաղած է ԶԲԸ Միութեան պաշտօնաթերթը «Միութիւն»-էն եւ գաղութահայ «Տարեցոյց»-էն ու կը գրէ.

«Եգիպտահայ գաղութին կարկառուն դէմքերէն եւ միջազգային համբաւի տիրացած անձնաւորութիւն մըն է Պր. Ճանկի Չագըր, որուն գաղութահայութիւնը կը պարտի խորունկ յարգանք եւ որուն արձագանգը կ'ըլլայ «Յիշատակարան», կենսագրութիւնը ներկայացնելով մեր ընթերցողը»:

Պր. Ճանկի Չագըր ծնած է Պոլսոյ Տաուտ փաշա թաղին մէջ 1879 Յունիս 1-ին եւ որդին է սկիւտարցի Մարտիրոս Զամբարձումեանի, որուն հայրը Իրանը Չագըր Օղլու, ծագումով Պարսկաստանի Զամատան քաղաքէն, գաղթած Պոլիս 1750-ին եւ պալատան բեկաբոյժն էր (խըրըխճի պաշի), մայրը Շահին Ռաֆայելեան, աղջիկն է Զեւեճի Սողոմոնի, հանրածանօթ աւագանիի սեղանաւոր:

Ինք իր եղբայրներուն եօթներորդն է, իր եղբայրն է նաեւ Պոլսոյ մէջ տպարանատէր Սերվիչէն, որուն մասին պիտի խօսինք ուրիշ առթիւ»:

Իր նախնական կրթութիւնը ստացած է Եւնի Գաբուի վարժարանին, իսկ բարձրագոյն կրթութիւնը՝ Ռուպերթ Գոլեճին մէջ, ուրկէ կը վկայուի 1900-ին:

Կու գայ Եգիպտոս եւ 1901 թուականին կը սկսի աշխատիլ Wagons Lits Միջազգային Ընկերութեան մէջ, որուն վարիչ կը նշանակուի 1906 թուականին:

1925-էն սկսեալ պատուակալ ընդհանուր քարտուղարն է Association pour favoriser le tourisme en Egypte ընկերութեան, որուն նախագահն է Սիւլեյման փաշա, իսկ 1926-էն անդամ եղած է Եգիպտոսի Պանդկներու Ընկերութեան վարչական խորհուրդին:

Ճանկի Չագըր նաեւ նախագահներէն մեկը եղած է Գահիրէի Միջազգային Theosophical Society ընկերակցութեան:

Մեծապէս գնահատուած է տարբեր կառավարութիւններու կողմէ եւ ստացած բազմաթիւ շքանշաններ.

- 1929 Պատուոյ լեգէնի աստիճան, ֆրանսական կառավարութեան կողմէ:
- 1930 Պելճիքական թագի ասպետութեան աստիճան:
- 1930 Ռումանիոյ թագի հրամանատարի աստիճան:
- 1931 Իտալիոյ թագի ասպետութեան աստիճան:
- 1933 Սուրիական արքունեաց շքանշան:
- 1934 Պուլկար քաղաքային արքունեաց ազգային մեծ խաչի շքանշան:
- 1935 Ս. Գրիգոր Լուսաւորչի առաջին աստիճան:
- 1935 Շուէտական արքայական Թոլուբոյ աստղի ասպետական աստիճան:

- 1937 Ֆրանսական պատուոյ լեգէնի սպայութեան աստիճան:
- 1937 Լիբանանեան արքունեաց ոսկի շքանշան:

Պետք է անպայման նշել նաեւ, որ ճ. Չագըրի գիրք եղած է գրեթէ անհասկնալի, այնքան, որ Սաթենիկ Թոփալեանի քոյրը՝ Նուարդ, պատահամբ տեսնելով սկիզբի նամակներէն մին, կը բացագանչէ՝ «Բայց այս ի՞նչ գիրք է, Սաթի, ըսէ՛ որ քիչ մը աւելի հասկնալի ձեւով գրէ»:

Նամակները կը հրատարակենք իրենց բնօրինակներուն լեզուով, անգլերէնով, ոչ միայն բնագրին հաւատարիմ մնալու համար, այլ մանաւանդ կարելիին չափ մեծ թիւով ընթերցողներու հասնելու համար, մանաւանդ արեւմտեան կողմն Սփիւռքի, ուր ոչ միայն երիտասարդութիւնը, այլ նաեւ միջին տարիքի ընթերցողները կը նախընտրեն անգլերէն կարդալ, լեզու մը, որուն շատ աւելի կը տիրապետեն եւ որ դարձած է իրենց մայրենին, որոշ չափով:

ԱՐԵՎԱՅԻՆ ԶԵՐՄՈՒԺԻ ԱՐԴԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ



Ճարտարագետ Կարպիս Մինասեան

Շատ վաղ ժամանակներէ ի վեր մարդը փորձած է օգտուիլ արեւուն ջերմութենէ: Ան եղած է տաքութիւն կամ կրակ ստանալու համար. միայն վերջին քանի մը տասնեակ տարիներուն գիտութիւնը յաջողեցաւ «արեւուն ճառագայթ»-էն էլեկտրական ջերմութ ստանալ, ինչ որ պահանջուած է այսօրուան համար:

Արեւուն ճառագայթէն էլեկտրականութիւն արտադրող սարքաւորումը կազմուած է հետեւեալներէն.

Ա. Արեւային վահանակի շարք (solar panel array),

Բ. Փոխադրիչ (inverter),

Գ. Սպառիչ տարողութիւն (loading),

Եւ քանի որ մեզի համար հետաքրքրական էին նաեւ գիշերային կամ ոչ-արեւոտ ժամանակները, ուրեմն պետք էր աւելցնել նաեւ հետեւեալ բաժինները.



Դ. Լիցքաւորիչը (electric charger),

Ե. Մարտկոցներու շարքը (batteries array):

Այս վերջին երկու բաժինները անհրաժեշտ են, որպէսզի էլեկտրականութիւնը օգտագործուի ոչ միայն անմիջականօրէն արտադրուած պահուն: Ուրեմն արեւային սարքը արդիւնաբեր ըլլալու առաջին պայմանը անոր որակաւոր բաժիններէ կազմուած ըլլալն է. որպէսզի բաժինները ունենան լաւ յատկանիշներ եւ կայուն տուեալներ:

Ա. արեւային վահանակի դրական յատկանիշներն են.

- ունենալ լիակատար տուեալներ,
- ունենալ ընդունուած միջազգային որակային վկայագրեր,
- սարքուած ըլլան էլեկտրականութեան չափանիշներուն համաձայն, (տեղական պիտակները չեն երաշխաւորեր որակաւորումը, որովհետեւ անոնք տակաւին չեն հիմնուած քննիչ աշխատանոցներու արդիւնքներուն հիման վրայ):

- արտադրութեան ժամկետի այժմեականութիւնը պայման է,
- արծաթեայ մանրաթելերը ըլլան շատ եւ լիակատար,
- վահանակներու շարքը կազմուած ըլլայ նոյն տեսակով, որակով ու տարիքով,

- կազմուած ըլլայ առանց կտրուածքներու կամ ճեղքոտուքներու,
- ունենայ տաք բիծերու եւ պիտակներու դիմադրողականութիւն,
- ապակին ըլլայ 3 մմ., անտաշ, զօրացուած եւ չցոլացնող,
- ունենայ բաւարար ուղղարկիչներ «տաեռտներ»:

Բ. Փոխադրիչի լաւ տուեալներն են.

- ունենալ լիակատար յատկանիշներ եւ տուեալներ,
- ունենալ ընդունուած միջազգային որակային վկայագրեր,
- շինուած ըլլալ էլեկտրականութեան չափանիշներու համաձայն,
- ունենալ հոսանքի եւ ճնշումի նուրբ ալիքներ,
- ունենալ փոխարկումի բարձր կարողութիւն,
- ունենալ լիակատար պահպանիչ եզրեր,
- նախընտրելի է, որ փոխադրիչը եւ լիցքաւորիչը ըլլան մէկ ամբողջութիւն (MPPT),

Գ. Մարտկոցներու շարքը ըլլայ արեւային, որպէսզի կարելի ըլլայ գործածել լիցքի 50 %-ը, իսկ լիցքը ամբողջութեամբ պարպուի 20 ժամէն: Ան-

Շար. 12 ➤

ՀՉՕՐ ՍՓԻՒՌԷ՝ ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Միհրան Զիրատչեան

Անցած տարուան մէջ հայութեան հիասթափութիւնն ու հոգեկան ընկճումները խորացաւ այն աստիճան, որ երբեք չէր եղած, գէթ իմ գիտակից կեանքի տարիներուս: Ծանր յուսախաբութեան հետեւանքով հայ մարդուն մէջ յառաջացաւ այն զգացումը կամ առնուազն հարցականը, թէ տապանաբար մը դրուած է արդեօք վերնագրով արտայայտուած կարգախօսին վրայ...:



Այս ծանր ու մահացու զգացումը յեղաշրջելու, յեղափոխելու, «յոյսով լեցուեցաւ» երզն կենսագործելու հրամայականը այս տարուան գերխնդիրն է:

Դժխեմ, շատ դժխեմ կացութեան մը մէջ կը գտնուիք ազգովին՝ սփիւռքէն-Հայաստան:

Հայրենիքի պետական այրերը դրօշի վերածած են «խաղաղութեան» խաբուսիկ օրակարգը, անգիտանալով, որ ամեն պայմանագիր պարզ թուղթի կտոր մըն է, ո՛չ աւելին: Գիտցող չկայ, որ Արեւելքն ու Արեւմուտքը կայսերական տրամաբանութեամբ բխող իրենց շահերը ունին եւ կը գործեն միայն այդ հարթակներուն վրայ: Անոնք հմուտ են յարմար պահեր ստեղծելու եւ իրենց ռազմաքաղաքական շահերու աղիւսակը հիւսելու այնպէս, որ օգտուին քու ուժեղ, դիրքեղ կամ տկարութենէդ, համոզելով քեզ միաժամանակ, որ փոխադարձաբար՝ քու եւ իրենց շահերը կը համընկնին իրարու:

Մեզի դաս եղած պիտի ըլլայ՝ թէ՛ Արեւելքն է թէ՛ Արեւմուտքն անցեալի մէջ ու աւելի թարմ օրերս մեր կրած ցաւատանջ յուսախաբութիւնները, որոնք հետեւանք էին անոնց խաբութեանց եւ մեր միամտութեան, դիւրահաւատութեան:

Մարդ կը գարմանայ, թէ պետական ղեկին վրայ գտնուող այրեր Արցախի աղէտէն վերջն իսկ, ինչպէ՞ս կը հաւատան ու կը դաւանին եւ կը փորձեն հաւատացնել, թէ երկրի խաղաղութեան ու բարգաւաճման յոյսի ապաւենն է խաղաղութեան «պայմանագիր» կոչուող թուղթ մը...:

Իսկ խոստացուած խաղաղութեան երաշխաւորները: Երեւոյն պիտի ըլլաս անոնց անկեղծութեան վրայ հաւատը ընծայելու համար:

Տարօրինակ թող չթուի ըսելու նոյնիսկ, որ որոշ չափով միջադարձական պիտի ըլլար, եթէ համարուէր, որ այսքան բարձրաձայնուած խաղաղութեան օրակարգը ներքին սպառնումի կը ծառայէ, երկրի հասարակութիւնը մոլորեցնելու եւ ընտրութեանց պարագային անկէ աւելի քուէ կորզելու համար է...:

Սա՛ ի Հայաստան:

Նոյնպէս յուսահատական է Սփիւռքի կացութիւնը: Մտահոգիչ չափերով պարպուած են արդէն Միջին Արեւելքի աւանդապահ եւ միւս հայօճախներուն համար արիւնատար համարուող հայահոծ հայազաղութները եւ հետզհետէ աւելի կը նօսրանան անոնք, իսկ այնտեղի մեր հայրենակիցներու անվտանգութեան ապահովումը գերխնդիր մըն է ինքնին, չիաշուած այդ երկիրներու մէջ մեծարժեք հաստատութիւններու անորոշ ապագան: Իսկ Արեւմտեան կողմն աշխարհի նորահաս սերունդներուն կը սպառնայ օտարացումը:

Եւ այս կացութեան մէջ, հայ մարդը ինչպէ՞ս է համատարած անտարբերութեան գիրկը, ինչ որ աւելի ահաւոր է, քան ամենէն ահեղ թշնամին:

Շար. 12 ➤

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Չոլաբեան եւ Չիմոյեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աշգարեանին, Գրգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիսխանեանին, Գրգշ. Տ. Արմեն Արդ. Գալաճեանին, Բահանայից Դասուն, Պատուելի Ասատուր Մնչերեանին, Գայ Աւետ. Էմմանուէլ Եկեղեցւոյ ԲՁ Ընկերակցութեան, ՀԱԸՍ-ի Ծրցանային Վարչութեան, ՀԱԸՍ-ի Սկստու խորհուրդի Վարչութեան, Ազգ. Բարեն Եփփէ Ճեմարանի Ծրցանաւարտից Միութեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղականութեան, բարեսիրական միութիւններուն եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց դուստրին եւ հարազատին՝




ՀՄՆԳՈՒՅՅԵԱԼ ՓԱԹԻԼ ՉՈՒԱՔԵԱՆԻ

մահուան սուգին: Հանգուցեայի քառասունից հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 28 Յունուար 2024-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ-Հայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցւոյ ներքնասրահը:

2024-Ը՝ «ՄԱՐԴՈՒԺԻ ՏԱՐԻ»



Առաքել Արթ. Գառնիճեան

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «մատը վերջին վրայ դնելով» 2024 տարին հռչակեց «Մարդու թի տարի»: Որքան տեղին է այս խորագրումը: Այսօր հայ կենսաբանական գիտությունները միջազգային մակարդակի վրայ: Այսօր հայ իրականությունը մեջ նկատելի է կարող է պատրաստուած մտաւորականներու, գիտնականներու, ուսուցիչներու, ազգային գործիչներու, արուեստագետներու, ղեկավարներու, մասնագետներու եւ տակաւին ինչ-ինչ պաշտօններու ատակ անձերու պակասը: «Գործն ասեմ, գործն խոստովանիմ»:

Հայ ազգի այսօրուան վիճակը մեզ կը յուշէ իմաստասիրութեան պատմութեան մէջ ծանօթ անուն մը՝ Դիոգիլես: Դիոգիլես այն փիլիսոփայն էր, որ ցերեկ ատեն լապտերն ի ձեռին փողոց իջած էր մարդ փնտռելու համար: Այս առումով, կը խորհիմ, որ եթէ Դիոգիլես այդ ժամանակ լապտեր բռնեց, այսօր մենք որ կ'ապրինք աշխարհի մը մէջ, ուր կան լուսատու գանազան բարձր մակարդակի գործիքներ, արդեօք ո՞ր գործիքը պիտի գործածենք, որպէսզի աւելի յստակ, մանրակրկիտ ու արագ գտնենք մեր փրկուած մարդիկը:

Վերջին քանի մը տարիներուն ամի՞թը ունեցայ ներկայ գտնուելու փայլուն մտքի տեր, աշխույժ գործունէութիւն տարած, պատմութեան մէջ իրենց դրոշմը ձգած եւ տիպար շատ մը հայորդիներու յուշ-երեկոններուն: Չարմաւալի կերպով անոնց մասին խօսող բոլոր անձերն ալ Նոյն Նախադասութիւնները տարբեր ոճերով կը կրկնէին: «Ո՞վ պիտի լեցնէ անոր տեղը», «Կարծես իրմէ ետք ուրիշը չկայ այս ասպարեզին մէջ», «Իր մասնագիտութեան մէջ վերջինս էր», «Արդեօք պիտի գայ երկրորդ այսինչեան մը»... տակաւին շարքը կ'երկարի: Յիշեալ բոլոր արտայայտութիւնները յստակօրէն կը փոխանցեն, որ հայ ազգը մարդու թի լուրջ տագնապի մէջ է: Մարդու «դրամագլուխի» նահանջ կայ: Կարողներու եւ մասնագետներու պատրաստման անյետաձգելի կարիք կայ:



Կանկա՞ծ վեր է, որ պատմութիւնը կը կերտուի բանիմաց, գիտնական, ուսումնասէր,

մասնագետ եւ մտածող մարդոց ձեռամբ: Անոնք են, որոնք կը մասն պատմութեան էջերու կերտումներուն, իսկ սովորական, տափակ եւ մակերեսային մարդիկ կը մասն պատմութեան լուսանցքէն անդին կամ փոշիներուն տակ: Հայոց պատմութիւնը լիառատ է կարկառուն եւ զլխագիր դեմքերով, որոնք պատմութիւն կերտած են բառին ամբողջական եւ հարազատագոյն իմաստներով: Ուրախանալ ու հպարտանալ մեր նախորդներու վաստակով՝ շատ բնական է: Բայց անով գինովնալ՝ ընդունելի չէ: Մենք կրցուած ենք անոնց գործը շարունակելու: Այդ անաքելութիւնը յառաջ տանելու համար, կարիքը ունինք նոր դեմքերու, նոր մարդու թի: Ինչպէս որ կենսաբանական գիտությունները հարմարեցնուին, այնպէս ալ հայ ազգի սկզբունքը պէտք է դարձնել կատարելութեան ձգտումը:

Ի՞նչ է այս բոլորին լուծումը: Ի՞նչ պէտք է ընել: Ինչպիսի՞ միջոցներու պէտք է դիմել: Ի՞նչ աշխատանք պէտք է տարուի:

Վերոնշեալ հարցադրումներուն մանրմասնօրէն կը պատասխանէ Կիլիկիոյ Ս. Աթոռին այժմու վեհափառ հայրապետը իր հռչակագիրին մէջ: Ան մարդու թի պատրաստման կարեւորութեան անդադարաւանջ կ'ընէ: «Քաջ պէտք է գիտնանք, որ առանց մարդու թի մեր կենսաբանական կորսնցնէ իր որակը, պիտի ճահճանայ ու գունաթափի եւ մեր գոյութեան արմատները պիտի տկարանան: Մարդու թի պատրաստութիւնը անյետաձգելի առաջնահերթութիւն է»: Ահաւասիկ մարտահրաւեր մը, որ կը դրուի իւրաքանչիւր հայորդիի ընդառաջ:

Հայ ազգի նպատակաւոր վտանգը կանխելու համար, Նորին Սրբութիւնը հետեւեալ լուծումները կ'առաջարկէ:

Ա) Հայ կենսաբանական գիտությունները մարդու թի մարդու թի ներգրաւել հայ կենսաբաններու:

Վեհափառը կը յայտնէ, թէ հայ ազգը գանազան մարդերէ ներս մասնագետներ, զարգացած երիտասարդներ, նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիներ եւ այլ մարդու թի ունի, որոնք ինչ-ինչ պատճառներով հեռու մնացած են հայ կենսաբաններէ: Ան կը յորդորէ, որ անոնք մօտեան հայ կենսաբաններու հաշտման հաւաքական ապրումներուն, մաքառումներուն, ծրագրիներուն եւ աշխատանքներուն: Հայրապետը կ'առաջարկէ, որ երկուստեք ուղղութեամբ (հեռացողներ եւ ազգային պատասխանատուներ) աշխատին այդ նուիրեալ գործին իրականացման:

Բ) Նոր մարդու թի պատրաստութիւն:

Կաթողիկոսը կ'ընէ: «Սա դիւրին ու հեզասահ եւ անմիջական կերպով իրագործելի ծրագիր մը չէ... Մարդու թի պատրաստութիւնը կ'ենթարդէ երկարաշունչ գործընթաց, ամբողջական նուիրում, լուրջ կազմակերպութիւն»:

ՔԵՍԱԿՈՐ ԵՒ ՋՐԻՇԵՂՆԵՐԸ



Սեւան Ա. Մանճիկեան

– Ի՞նչ պատահած է Քեսապ...
– Ընկերային ցանցերու վրայ տեղադրուած են ջրիեղէղի տեսերիկներ եւ նկարներ, Աստուած խնայէ եւ պահպանէ:

Անցեալ շաբաթավերջին քանիցս կարդացի ջրիեղէղին մասին նման Նախադասութիւններ եւ մեկնաբանութիւններ, որոնք զիս մտքով շատ-շատ տարիներ ետ տարին: Յուշերովս հասայ ինն, ուր տակաւին փոքր էի, հայրս կը պատմէր իր հայրերէն բերանացի լսած պատմութիւններէն, թէ ինչպէ՞ս Քեսապի մէջ Մեծ Եղեռնէն բաւական առաջ տեղի ունեցած է մեծ ջրիեղէղ մը: Այդ ջրիեղէղը հին շուկայի մօտակայ տուններուն ու խանութներուն մեծ վնաս հասցուցած է: Հին շուկային դիրքը՝ այսօրուան Քեսապի ժողովրդային ակումբին շուրջը կը գտնուէր տարածութիւնս է:



Ժամանակին, երբ ճամբաները կուպրապատուած չէին, անձրեւի գօրաւոր տեղումները ճամբաներու ուղղութիւնները կրնային փոխել, իսկ բարձունքներն ի վար քշուած քարերն ու խիճերը, երբեմն ժայռերը կրնային ճամբաները փակել:

Կրնային նաեւ ձմեռային մշակուած բանջարեղէնը անձրեւի ջուրին հետ տանիլ: Այս բոլորը վերականգնելը աշխատանք ու կամք կը պահանջէր քեսապցիներէն, որոնք կամքէն բան չէր պակսէր:

Քեսապի ջրիեղէղի՝ Սելի (քեսապի բարբառով հեղեղ), պատմութիւնը ճշգրիտ իմանալու համար պէտք է յայտնել, որ Քեսապ լեռնային շրջան ըլլալով, տեղատարափ անձրեւին հոսքը Կասիոս լեռան գառնափն ի վար կը հոսի ու մեծ արագութեամբ իրեն հետ կը բերէ խիճեր: Այդ խիճերու շարժումով քարերն ալ կը գլտորին, անոնց կը միանան ժայռերն ու պոկուած ծառերը, գլխաւոր թիրախ դարձնելով հրապարակին վրայ գտնուող խանութներն ու տունները: Ջրիեղէղը կը սկսի վերի շուկայէն (այսօրուան փուռի գառնափն վրայ գտնուող խանութները) հասնելով հրապարակի խանութները:

Քեսապի շուկային առաջին կամուրջը կառուցուած է վերի շուկային կողմը: Այդ կամարածէ, հնամենի կամուրջը ցայսօր կը գտնուի Քեսապի հին շուկային կեդրոնը, որուն խանութներուն մէջ մասը այսօր տեղափոխուած է աւելի վար ու տարածուած Քեսապի հրապարակին վրայ: Այդ կամուրջին երկրպագին է հանրածանօթ Նազար Ուսթա Գարայեան, որ հեղինակ ճարտարապետն է նաեւ Քեսապի եւ Այսթապի կաթողիկէ եկեղեցիներուն:

Երկրորդ կամուրջը կառուցուած է Քեսապի հրապարակին վրայ, որ կ'երկարի մինչեւ Քեսապի այսօրուան գիւղապետարանը: Գետակը կը հոսի մինչեւ Եսկիւրան, անցնելով Սամասի թաղամասէն: Ետքը կը շարունակէ իր ճամբան դէպի Լաթաքիոյ արեւելքը գտնուող մեծ գետակներուն միանալով:

1971-ի Յունիս ամսուան քանի առաւօտուն (ամառ) պատահած ջրիեղէղը քեսապցիներու յիշողութեան մէջ ամենէն ծանր ու վնասաբերն էր: Այդ ջրիեղէղը իր ետին ձգած է հսկայ աւերներ ու վնասներ: Ան խանութներու մէջ այդ օրերուն գտնուած հացահատիկներու տեսականին, սիմենթը, ալիւրը, անասուններու կերը եւ մանրավաճառի իրերը թրջած ու ջուրով թաղած էր, կամ ալ ջուրի գօրաւոր հոսքին հետ քաջքաջ ու խանութներէն դուրս հանած էր: Ծուկայի խանութպանները ջրիեղէղը հանդարտելէ ետք իրենց խանութի ապրանքներուն մնացորդացը Սամասէն, երբեմն ալ Եսկիւրանի մօտիկ պարտէզներէն գտած են:

1976-ին, կրկին ամառն ընթացքին, առաւօտեան տեղի կ'ունենայ ջրիեղէղ մը, այս անգամ հազիւ խանութներու գետիկը դրուած իրերու կամ ցորենի, ալիւրի եւ ընդհանրապէս տոպրակներուն յատակը կը թրջէ:

1990-ական թուականներու կիսուն ալ ջրիեղէղը կը պատահի, սակայն վտակի ջուրը չի բարձրանար այնքան, որ խանութներուն վնաս հասցնէ:

Քեսապի մէջ պատահած ջրիեղէղներուն կողքին, պէտք է յիշել Գարատուրան գիւղի մէջ տեղի ունեցած ձմեռուան տեղատարափ անձրեւներու հետեւանքով յառաջացած մեծ սահանքները: Առաջինը 1937 թուականի սահանքն էր, որ կուլ տուաւ Գազազեան եւ ԼՆդեան թաղերը: Իսկ 23 Մարտ 1998-ի սահանքը այս անգամ Սաղտճեան թաղի կարգ մը տուններն ու պարտէզները կուլ տուաւ:

Հաւանաբար դիմատետրի էջերուն վրայ տեղադրուած նկարներուն եւ տեսերիկներուն տակ արձանագրուած մտահոգութեանց մեկնաբանութիւնը եւ մերձակայ խանութպաններու եւ բնակարաններու բնակիչներուն վախն ու տագնապը արդիւնք են անոնց մտքին մէջ դրոշմուած անցեալի տարիներու ջրիեղէղին յառաջացուցած աղէտներու յիշողութեան:

Տեղատարափ անձրեւը մէկ կողմէ պարտէզներուն ու ծառերուն համար օգտակար է, միւս կողմէ քեսապցիին համար մինչեւ այսօր մղձաւանջ կը յիշենք:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Ընկերային յարաբերություններու բարելաւման շաբաթ է: Այս բոլորը նոր գործարքներու առիթ ալ կըրնան բանալ ձեր դիմաց:



ՑՈՒԼ

Տարուան լաւագոյն շաբաթը պիտի ըլլայ այս շաբաթ՝ գործի յաջողութեան իմաստով: Կարգ մը կարեւոր հարցեր պիտի լուծէք ու նոր առաջարկներ պիտի ստանաք այս շաբաթ:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Եթէ հանրային գործիչ էք, միութենական շրջանակի մէջ առիթ պիտի ստեղծուի գրոյց կամ հետաքրքրական ելոյթ ունենալու:



ԽԵՅՁԵՏԻՆ

Ձեր անմիջական շրջապատին հետ հասկցուելու դժուարութիւն պիտի ունենաք, պիտի զգաք, որ մէկը կը պատրաստուի մերժել ձեր դիմումը կամ խնդրանքը:



ՎՈՒԻՇ

Անհամաձայն պիտի ըլլաք ընտանեկան կարգ մը որոշումներու, որոնք շատ անարդար են ձեր հաշուով:



ԿՈՅՍ

Յուսալի եւ արդիւնաւետ շաբաթ մը պիտի ըլլայ, զգալի յաջողութիւն պիտի արձանագրէք եւ նուաճում կերտէք:



ԿԵՒՈՔ

Տարիներ շարունակ ձեր աշխատանքին վարձատրութիւնը նոր առաջարկներով պիտի ստանաք ու եկամտի բարելաւում ունենաք:



ԿԱՐԻՃ

Կասկածանքով մի՛ նայիք ձեր շուրջիներուն, փորձեցէ՛ք ձեր շրջապատին հետ հարցեր ունենալ խուսափիլ, որպէսզի անհաճոյ վիճակի մէջ չյայտնուիք:



ԱՂԵՂԱՍՈՐ

Ձեր վեցերորդ զգայարանքին ականջ տուէ՛ք, որովհետեւ կարգ մը հաստատումներ ճիշդ դուրս պիտի գան:



ԱՅՏԵՂԶԻՐ

Սիրային կեանքի մէջ դրական զարգացումներ պիտի արձանագրուին, հին սեր մը պիտի վերակենդանանայ կամ երկար ատենէ տեղջայլի մէջ եղող յարաբերութիւն մը պիտի աշխուժանայ ու թարմութիւն ապրի:



ՋՐՅՈՍ

Այս շաբաթ պիտի սկսիք նոր ու հետաքրքրական աշխատանք մը, որ պիտի նպաստէ ձեր անհատականութեան զօրացման:



ՋՈՒԿ

Դժուարութիւններու մէջ այլոցմէ օժանդակութիւն մի՛ ակնկալէք: Փորձեցէ՛ք ձեր հարցերը իրովի լուծել:



ԻՆՉՊԷՍ ԿՐՆԻՄԵԼ ԿՐՆՈՒՄ ԾԵՐԱՑՈՒՄԸ

Ծերացումը հոգեբանական, ֆիզիքական եւ ընկերային փոփոխութիւններու ամբողջութիւն է, որուն ընթացքին մարմնի կենսական բոլոր անդամները կը սկսին կորսնցնել իրենց աշխատանքի որոշակի կարողութիւնները: Ծերացման փոփոխութիւնները տեղի կ'ունենան մարմնի բոլոր բջիջներուն, հիւսուածքներուն մէջ, եւ այդ փոփոխութիւնները կ'ազդեն մարմնի բոլոր անդամ-համակարգերուն գործունեութեան վրայ:

ՈՐՈՆՔ ԵՆ ԾԵՐԱՑՄԱՆ ԱԿԱՏՈՃԱՆՆԵՐԸ:

Ծերացման պատճառները բազմաթիւ են՝ բջիջային, հորմոնային, փոխարկումի եւ կուտակման հետեւանքով յառաջացող վնասներ: Բջիջային ծերացումը կը վերաբերի բջիջներու բազմապատկումի կարողութեան նուազումին: Սովորաբար, բջիջները կը բազմապատկուին մօտաւորապէս 50 անգամ: Թունաւոր նիւթերը, արեւը, ոչ սննդարար ուտելիքը, ծուխն ու օդի ապականումը կը վնասեն բջիջներու վերականգնումի կարողութեան: Որոշ հորմոններ մարմինը երիտասարդացնող յատկութիւն ունին: Դետեւաբար, տարիքի հետ այդպիսի հորմոններու (թեստոսթրոն, էսթրոժէն, աճի հորմոն) մակարդակի անկումը ծերացման կ'առջնորդէ: Ծերացման այլ պատճառներ են քրոնիկ գերճնշուածութիւնը՝ սթրէսը, ճարպակալումը եւ այլն:

ՈՐՈՆՔ ԵՆ ԾԵՐԱՑՄԱՆ ԱՄԻՏԱՆՆԱԿՆԵՐԸ:

Վարակի ընկալման բարձրացում, հասակի կարճացում, ոսկորներու փխրունութիւն, յոգեբանական վնասուածք, կռացած կեցուածք, դանդաղ եւ սահմանափակ շարժումներ, կենսուժի նուազում, պնդութիւն, միզապահութեան դժուարութիւն, կեղրուացման, յիշողութեան եւ մտածողութեան դանդաղում, տեսողութեան վատացում, լսողութեան կորուստի նշաններ, եւ այլն:

ԻՆչա՛ք՝ս կանխել կամ յետաձգել ծերացումը:

Ապրելակերպ: Սահմանափակ ջերմութով եւ սննդարար ուտելիքի օգտագործումը դրական ազդեցութիւն ունի մարմնի հիւանդութիւններէն պաշտպանուելուն առումով: Բիչ իւրով սնունդն ալ կրնայ երկա-



րացնել մարդու կեանքին տեւողութիւնը: Նախընտրելի է սննդակարգը համալրել բանջարեղէնի, ընդդէմի, ձկնեղէնի եւ ձիթաիւղի օգտագործումով:

Քուն: Օրուան ընթացքին 6-7 ժամ քնանալը շատ կարեւոր է առողջութեան համար:

Ֆիզիքական աշխուժութիւն: Անկախ քրոնիկ հիւանդութիւններէն եւ տարիքէն, անհրաժեշտ է աշխոյժ կեանք վարել: Ֆիզիքական աշխուժութիւնը կը նուազեցնէ վաղաժամ մահուան հաւանականութիւնը, կը նպաստէ մտաւոր առողջութեան եւ առողջ ծերացման:

Գերճնշում (Սթրէս): Քրոնիկ սթրէսը կ'արագցնէ ծերացումը: Դետեւաբար հարկ է ձգտիլ հաւասարակշռու աշխատանքը, մարդկային յարաբերութիւնները, հանգիստը եւ գուարճանքը, դիմացկունութիւն ունենալու զանազան ճնշումներու եւ անյաջողութիւններու պարագային:

Ոգելից ըմպելիներ: Ոգելից ըմպելիներու չափազանցուած օգտագործումը բացասական ազդեցութիւն ունի մարդուն առողջութեան վրայ:

Ծխախոտ: Ծխելը առողջութեան եւ մարդու կեանքին համար ամենավտանգաւոր սովորութիւններէն է: Դարկ է հեռու մնալ այս սովորութենէն:





Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՁԵՆ

-Ասիոյ ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներու առաջին հանդիպումին, Սուրիոյ հաւաքականը բարձրորակ խաղարկութեամբ 0 - 0 հաւասար արդիւնքով աւարտեց Ուգանդայի հետ իր մրցումը: Սուրիոյ հաւաքականը ներկայացաւ նոր կազմով, որուն միացան հինգ սուրիահպատակ մարզիկներ: Աւելցնենք, որ նախքան այս հանդիպումը, հաւաքականի արժանաբան մարզիչ Յիքթոր Բոփըր ենթարկուեցաւ քննադատութիւններու՝ կազմէն Օմար Սոման հեռացնելուն համար, բայց նորակազմ հաւաքականի բարձրորակ ներկայացումը գոհունակութեամբ հասկեց բոլորը:



-Սուրիոյ պասքեթի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն, ՅՍՀՄ-ի տղաքը Լաթաքիոյ մէջ 64 - 53 արդիւնքով պարտութեան մատնեցին հիւրընկալ Յըթինը: Մրցումին ներկայ էին Լաթաքիոյ եւ Բեսապի մասնաճիւղերէն մեծ թիւով ՅՍՀՄ-ականներ եւ համակիրներ: Յամայի մէջ ՅԵԸ-ի տղոց կազմը պարտութեան մատնուեցաւ Թալիաանէ՝ 79 - 66 արդիւնքով:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԵՆՐԻԿ ՄԵՍԻՅԱՆ ԲԱՅԱՍՏԱՆԻ 2023 ԹՈՒԿԱՆԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈՒՍՏ

Հայաստանի ֆուտբոլի Դաշնութիւնը (այսուհետեւ՝ ՀՖԴ) յայտարարեց Հայաստանի 2023 թուականի լամագոյն ֆուտբոլիստի քուէարկութեան արդիւնքը: ՀՖԴ-ը տեղեկացուց, որ 81 կէտ ապահովելով՝ 2023 թուականի լամագոյն ֆուտբոլիստի կոչումին արժանացած է իտալական Ինթըրի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեան: Երկրորդ հորիզոնականը 48 կէտով զբաղեցուցած է Հայաստանի ազգային հաւաքականի եւ Կրասնոթարի կիսապաշտպան Եդուարդ Սպերցեան, իսկ երրորդ դիրքը 21 կէտով զբաւած է Հայաստանի ազգային հաւաքականի եւ ալ-Ֆաթէի կիսապաշտպան Լուքաս Սելարայեան:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՑ ՏԻՐԱՅԱՄ ՍՊԱՆԻՈՑ ՍՈՒՓՈՐԻ ԳԱՄԹԻՆ

Սոււտական Արաբիոյ մայրաքաղաք Ռիատի մէջ տեղի ունեցաւ Սպանիոյ Սուփոր գաւաթի աւարտական մրցումը, որուն ընթացքին անգամ մը եւս մրցակիցներ դարձան ՌԵԱԼ Մատրիտն ու Պարսելունան: 4 - 1 արդիւնքով աւարտած Զլասիքոյի հանդիպումը սկիզբ առաւ ՌԵԱԼի տիրապետումով, ուր ան առաջին վայրկեանէն կրցաւ իշխել խաղարկութեան եւ վտանգի ենթարկել մրցակիցին դարպասը: Հանդիպումի 7-րդ վայրկեանին, ՌԵԱԼի պրագիլցի խաղացող Վինիսիոս Ճունիըրը կատարեց կոլերուն բացումը, որմէ երեք վայրկեան ետք կրկնապատկեց արդիւնքը: Պարսելունան անակնկալի առջեւ գտնուելով կրցաւ կազմաւորել իր դիրքերը եւ 33-րդ վայրկեանին նշանակել իր միակ կոլը՝ Լիւանտովեսկիին հարուածով: 39-րդ վայրկեանին, Ճունիըրը տուգանային հարուածով արձանագրեց խումբին եւ իր անձնական երրորդ կոլը: Երկրորդ կիսախաղը ընթացաւ նոյն կերպով: ՌԵԱԼ տիրապետեց խաղարկութեան եւ յաջողեցաւ դարձնել մրցակիցին բոլոր յարձակումները: 63-րդ վայրկեանին, պրագիլցի Ռոտրիկոս նշանակեց ՌԵԱԼի չորրորդ կոլը: 72-րդ վայրկեանին հանդիպումի իրաւարարը կարմիր քարտով դաշտէն հեռացուց Պարսելունայի խմբապետ Արայիոսը:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 471)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբոջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Իգական անուն: Եղիկ:
- Տառի մը անունը: Դատարկ:
- Հակառակ՝ համբոյր: Արմատը ճիւղերուն միացնող մաս: Արական անուն:
- Տարածքի միաւոր: Գոց:
- Տարածել: Հակառակ՝ թանկարժէք մետաղ:
- Կրկնուած ձայնաւորներ: Աղբիւր: Շարժուն մեքենայի ուղղութիւն դրոշմող գործիչ:
- Ասացուածք կ'ըսէ. «Դուն քուն՝ բախտդ.....»: Հինգշաբթի:
- Հակառակ՝ շաղկապ: Ձայնանիշ:
- Անբիծ: Իգական անուն:
- Շալկել: Հարուած:
- Կրկնուած ձայնաւորներ: Անձնական դերանուն: Ձայնանիշ:
- Քնանալ: Արտաքսել:


Ուղղահայեաց

- Արդիւնք: Թաքուն պայթուցիկ:
- Արեւ: Թուր:
- Կնիքի դրոշմ: Ձայնաւոր տառեր:
- Անձնական դերանուն: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: 5030:
- 22: Կտաւ: Եւս:
- Շաղկապ: Հունտ:
- Հակառակ՝ շաղկապ: Հովասուն:
- Աստուածային: Պատերազմ:
- Աղեղի թել:
- Հեռաձայնի ականջի մաս: Ռումբի տեսակ:
- Հակառակ՝ քաջ: Կրկնուած ձայնաւորներ: Հակառակ՝ բայական ծորղութիւն:
- Ս. Գրիգոր Լուսաւորիչի հայրը: Յագենալ:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 470)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ղ	ա	գ	ա	ր	փ	ա	ր	պ	է	ց	ի
2	ն	ր	ա	կ	ա	ւ	ն	ր	է	լ	լ	լ
3	ւ			ա	յ	ն			ղ	ա	տ	
4	կ	ն	ճ	ղ	լ	լ			է	կ	հ	
5	ա	խ		ձ	ի	ա	ւ	լ		չ	է	
6	ս			ն	ւ	ր	ա	ր	տ	ա	ր	
7		ա	ղ	ւ	է	ր		ի	կ	բ		
8		մ	ա	ն	ր	ր	ա	ն	ա	տ	ա	
9	ւ	ի	տ		յ	ա		պ	ա	ր	ա	պ
10	ա	ր	ա		ն	տ			ն	ա		
11	գ	ա	ր	է	գ	ի	ն	ժ	ղ	է	հ	
12		կ	է	ն	ւ	ն	ւ	ր	ա	խ		

ԼՈՒՐԵՐ



«ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ» ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ ԸՆԹԵՐՅՈՒՄԵՆ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԲՈԼՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Իրաքանչիւր տարի մեր ժողովուրդի կեանքին հետ անմիջական աղերս ունեցող արժէք մը կամ երեւոյթ մը լուսարձակի տակ առնելու անհրաժեշտը պահելով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետ 2024 տարին հռչակեց «Մարդուծի Պատրաստութեան Տարի», հրահրելով բոլորը լարուած աշխատանքով նպաստելու մարդուծի պատրաստութեան գործընթացին:



Արդարեւ, Կիրակի, 14 Յունուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս հանդիսաւորապէս ընթերցուեցաւ Մարդուծի Պատրաստութեան Տարուան հայրապետական պատգամը:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յընթաց Սուրբ Եւ Ամմահ Պատարագին ընթերցեց Նորին Սրբութեան հայրապետական պատգամը, ներկայութեամբ Ազգային Վարչութեան անդամներու:

Թեմի եկեղեցիներուն մէջ յընթաց Սուրբ Եւ Ամմահ Պատարագին հայրապետական պատգամը ընթերցեցին՝ ճեղհիւրի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեան (Հասիչի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի), Առաջնորդի Օգնական Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան (Սրբ. Զառանգ Մանկանց Մայր եկեղեցի), Հոգ. Տ. Արմէն Աբդ. Գալաճեան (Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի), Զեսապի Հոգեւոր տեսուչ Հոգ. Տ. Անդրանիկ Վրդ. Զիւրիմեան (Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցի), Լաթաքիոյ եւ ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն Ա. Զինյ. Զեօշկերեան (Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցի) եւ Արժ. Տ. Պսակ Զինյ. Պերպերեան (Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցի):

Մարդուծի Պատրաստութեան Տարուան հռչակագիրը կը բացուի Նորին Սրբութեան հայրական ողջոյնով եւ Նոր Տարուան բարեմաղթութիւններով, ապա կը պարզուի Հայրապետական հռչակագրերուն նպատակը, որ եկեղեցւոյ առաքելութեան հետ համահունչ կը ձգտի անհրաժեշտ ցուցմունքներ կատարել՝ ի խնդիր հոգեւոր, բարոյական ու ազգային արժեքներու առաւել կենսաւորման:

Վեհափառ Հայրապետը անդրադառնալով 2022-ի եւ 2023-ի հռչակագրերուն, որոնք նուիրուած էին Սփիւռքին, կը յայտնէ, թէ մեր կառոյցները կենսաւորողը, մեր համայնքները ծաղկեցնողը, Սփիւռքը որպէս հայակերտն գոյութիւն ամրապնդողը, անոր ազգային ինքնութիւնը պահողը եւ որակ ու ուղղութիւն տուողը իր մարդուծի է՝ հոգեմտաւոր պատրաստութիւն, մասնագիտական կազմաւորում ու ամբողջական նուիրում ունեցող մարդուծի: Ա՛յս խոր համոզումէն մեկնելով, ան 2024 տարին կը հռչակէ՝ ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ: (Կոնդակը ամբողջութեամբ տեսնել թերթի ներկայ համարին 1,4,5,6 էջերուն վրայ):

Հայրապետական պատգամի լոյսին տակ, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր մարմինները 2024 տարուան ընթացքին հրահրուած են սերտուած ծրագիրներ մշակելով իրենց ներդրումը բերելու մարդուծի պատրաստութեան գործընթացին:

ՀՅՈՐ ՍՓԻՐՈՔ՝...

Սկիզբ՝ էջ 8

Ինչո՞ւ այս տխուր հաստատումները:

Պարզապէս ըսելու համար, որ ներկայ կացութիւնը չի յեղաշրջուիր ոգեշունչ գրառումներով ու ճառերով, ցանկութիւններով ու մաղթանքներով, ոչ ալ իմաստալից խմբագրականներով ու յօդուածներով կամ տպաւորիչ պատգամներով ու կոչերով:

Կացութիւնը այնքան խոր է ու մտահոգիչ, որ թերեւս որոշ չափով յեղաշրջուի ան այն պարագային միայն, որ ի գործ դրուի անհրաժեշտ ջանքը ազդու միջամտութիւններով՝ համահայկական ռազմավարութեան մը մշակման ի խնդիր համախմբելու համար հայ իրականութեան մէջ դերակատար ուժերը եւ ատով իսկ յոյսով պարուրելու հայ մարդոց հոգիները:

ՀՀ-ի վարչապետին անձնակազմին ու ինքնապարտադիր նկարագիրը եւ յոխորտանքով կառավարելու մնայուն վիճակը թէեւ կասկած չեն թողոր այլ հաւանականութիւններու, այսուհանդերձ կրնայ բացառուած չլլալ, որ ան իր ետին համահայկական նեցուկ ու յենարան չունենալուն պատճառով է խաղաղութեան օրակարգի մը կառուելու խարխափումը:

Այսպէս կամ այնպէս, հարկաւոր է յուսատու մեծ ցնցում մը, այնքան ուժեղ, որ վերակենդանացնէ թմրած ջիղերը եւ ազգը վերագտնէ հոգեկան ամրութիւնն ու կորովը այնպէս, ինչպէս յատուկ եղած է իրեն՝ իր պատմութեան երկայնքին: Այսինքն՝ խորագոյն դժբախտութիւններուն մէջ իսկ յոյսով նայի ապագային եւ պարտութիւններուն մէջ՝ յողթանակներ գտնէ:

Կրկնենք. ցնցում մը՝ ուժեղ, յուսատու եւ վճռական ցնցում մը:

Ահա Նոր Տարուան սպասուած նուէրը: Ժամանակ չկայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱԼԵՊԻ ՉԼԻՍԱՌՈՐ ՀԻՊԱՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԱԿԱՆ-ՀԻՊԱՏՈՒԹ ԱՅՅԵԼԵՑ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ

Հինգշաբթի, 11 Յունուար 2024-ի առաւօտուն, Հայաստանի Հանրապետութեան Հալեպի Գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական-Հիւպատոս մեծարգոյ տիար Բարգէն Պատալեան այցելեց Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին, Ազգային Առաջնորդարանէն ներս:



Ջերմ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին, տիար Բարգէն Պատալեան շնորհաւորեց Սրբազան Հայրը Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի տօներուն առիթով եւ առաւել ոյժ եւ կորով մաղթեց անոր: Այս առիթով, ան փոխանցեց Սուրբ մէջ ՀՀ Արտակարգ եւ Լիազօր Դեսպան մեծարգոյ տիար Տիգրան Գեորգեանին շնորհաւորական բարեմաղթութիւնները:

Սրբազան Հայրը իր հայրական օրհնութիւնները փոխանցելով, քաջատոյժութիւն եւ արեւշատութիւն մաղթեց պարոն հիւպատոսին, իր ընտանիքի պարագաներուն, պարոն դեսպանին եւ ողջ հայութեան, ինչպէս նաեւ խաղաղութիւն մաղթեց մեր հայրենիքին եւ ողջ աշխարհին:

Հանդիպումին արծարծուեցան զանազան նիւթեր:

ԱՐԵՒԱՅԻՆ...

Սկիզբ՝ էջ 8

Իրաժեշտ է, որ արտադրութեան թուականը 3 ամիսը անցած չլլայ:

Որակաւոր ապրանքը ապահովելէ ետք, կը մնայ սարքին կազմը որոշել իր զանազան բաժիններով՝ վահանակներ, մարտկոցներ, փոխադրիչ, սպառիչ... եւ այլն, հիմնուելով ճարտարագիտական նորը հաշուարկներով վրայ, ապահովելով սարքի լիակատար հաւասարակշռութիւնը, ուժի տատանումները... եւ այլն. նախընտրելի է նաեւ, որ օժտուած ըլլայ շանթարգելով, մասնաւորաբար թէ վահանակները կը գտնուին իրենց շուրջի իրերէն աւելի բարձր դիրքի վրայ:

Այս բոլորէն ետք չմոռնալ, որ արեւային շերմուծի սարքաւորումները աւելի աժան բնոյթ չունին նախորդ դասական գործիքներէն, այլ անոնց աշխատանքը պարզապէս աւելի մաքուր, յարատեւ եւ վերանորոգուող բնոյթ ունի: Ուրեմն ան ենթակայ է մաշելու, հաւասարակշռութիւնը կորսնցնելու, ելեկտրականութեան բնոյթով աւելի պատրաստակամ է բոցավառելու, արագ ու յաճախակիօրէն փոշոտելու:

Ժամանակի ընթացքին անոր ենթակայ գործօններուն դէմ հարկ է հոգատարութիւն, ինչպէս ցուցաբերել է պարբերաբար խորոզել գանոնը:

Արեւային սարքերը հարկ է խորոզել հետեւեալ ձեւով.

Առաջին: Պարբերաբար լուալ եւ մաքրել վահանակները. անոնք միշտ պէտք է ըլլան զերծ փոշիներէ եւ ամէնէն թէթեւ շուքերէ անգամ (օրինակ ելեկտրական լարի մը շուքն իսկ անընդունելի):

Երկրորդ: Նորոգել վահանակի շարքը, փոխադրիչը, մարտկոցներու շարքը, սպառիչներու հաւասարակշռութեան պահպանումը:

Երրորդ: Մարտկոցներու պարբերական խորոզութիւնը եւ հակակշռումի ստուգումը, որ կրնայ պատահիլ նոյնիսկ շատ կարճ ժամանակի մը ընդմիջումով, ոչ-արտօնելի գործածութեան մը պատճառով:

Չորրորդ: Պարբերաբար հետեւել եւ նախազգալ սարքին մէջ տարածուող լարերու տաքութեան փոփոխութիւնները:

Հինգերորդ: Սպառիչները գործածել ինչպիսիքութեամբ եւ պահպանել ուժին սպառման տարողութիւնը՝ գործածել ինչպիսիքական լոյսեր եւ զանոնք մարած պահել, երբ լոյսի կարիք չկայ: Ամէն տեսակի խանգարումները անյապաղ լուծել:

Տակաւին կարելի է յիշատակել շարք մը մանրամասնութիւններ, որոնց պէտք է ուշադրութիւն դարձնել, սակայն թէ յիշուած ճիշդ կիրարկուի, արդէն հարցերը մեծ մասամբ կը վերանան: